



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Վարչապետի Հրաժարականն Ետք

Ինչպես որ յայտարարուած էր, Հոկտեմբեր 16-ին Վարչապետ Նիկոլ Փաշինեան ներկայացուց իր հրաժարականը: Յաջորդ երկու շաբաթներուն քաղաքական գետնի վրայ Հայաստանէն ներս պիտի տիրէ անորոշութիւն, մինչեւ որ կարելի ըլլայ ապահովել գործող Խորհրդարանի անցնցում լուծարումը՝ օրէնքով նախատեսուած բաւական բարդ գործընթացներէ ետք:

Առաջին քայլը պիտի կատարուի Վարչապետի հրաժարականէն եօթը օր ետք, երբ Ազգային ժողովը պէտք է գումարէ նիստ եւ չընտրէ նոր վարչապետ: Այնուհետեւ, եօթ օր եւս սպասելէ ետք, պէտք է գումարուի երկրորդ նիստ ու քաղաքական համաձայնութեամբ, դարձեալ վարչապետի ընտրութիւն տեղի պէտք չէ տեղի ունենայ եւ Խորհրդարանը նկատուի լուծարուած:

Վարչապետի այս սպասուող քայլը քաղաքական շրջանակներու եւ լայն հասարակութեան մօտ մտահոգութիւն յառաջացուցած էր, որ տապալուած համակարգի ներկայացուցիչները կրնան դիմել քայլերու՝ իրենց կորսնցուցած իշխանութեան վերատիրանալու նպատակով, որուն ժողովրդային հակազդեցութիւնը անկասկած պիտի ըլլայ շատ խիստ եւ կտրուկ, սակայն միաժամանակ երկիրը դնելով նոր ցնցումներու առջեւ:

Վերջին օրերուն սակայն, այդ մտավախութիւնները մեծ մասամբ փարատած կը թիւն ըլլալ, Փաշինեանի կողմէ առնուած յստակ եւ վճռական քայլերուն շնորհիւ, որոնք եկան չէզոքացնելու այլ հաւանականութիւնները:

Խորհրդարանէն ներս ներկայացուած բոլոր ուժերը արդէն իսկ յայտարարած են, որ նպատակ չունին վարչապետի սեփական թեկնածու առաջադրելու եւ ակամայ հաշտուած են Դեկտեմբերին արտահերթ ընտրութիւններ կայացնելու գաղափարին հետ:

Ամէն ինչ նախատեսուածին նման ընթանալու պարագային, Հայաստան պիտի թեւակոխէ նախընտրական հանգրուան եւ մեծ են յոյսերը, որ երկար տարիներու ընդմիջումէ ետք, Հայաստանի մէջ տեղ պիտի ունենան ազատ, արդար եւ թափանցիկ խորհրդարանական ընտրութիւններ եւ ժողովուրդը առիթ պիտի ունենայ ընտրելու իր նախընտրած թեկնածուին, առանց իշխանական ճնշումներու, առանց թաղային հեղինակութիւններու միջամտութեան եւ ամենէն կարեւորը՝ առանց կաշառքի:

Այսպիսով, Վարչապետի հրաժարական կը հանդիսանայ առաջին քայլը թաւեայ յեղափոխութիւնը իր լրումին հասցնելու ուղղութեամբ, որմէ ետք կ'ունենանք նոր որակի Հայաստան:

«ՄԱՍԻՍ»

Վարչապետ Փաշինեան ներկայացուց իր հրաժարականը՝ Արտահերթ Ընտրութիւններուն Ընթացք Տալու Նպատակով

Հոկտեմբեր 16-ի երեկոյեան, հեռատեսիլ միջոցաւ իր ունեցած պաշտօնական ելոյթի ընթացքին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց իր հրաժարականի մասին:

«Ես այսօր հրաժարական եմ տալիս ՀՀ վարչապետի պաշտօնից: Այս հրաժարականի նպատակը, սակայն, վարչապետի պաշտօնից հեռանալը, այսինքն՝ ձեր առաջ ստանձնած պատասխանատուութիւնից փախչելը չէ, այլ ընդհակառակը՝ մեր միասին իրականացրած ոչ բռնի, թաւշեայ, ժողովրդական չեղափոխութիւնն աւարտին հասցնելը՝ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ անցկացնելու եւ ողջ իշխանութիւնը ժողովրդին վերադարձնելու միջոցով», - յայտարարեց Հայաստանի վարչապետը ուղիղ եթերի ժամանակ:

Ապա ան բացատրեց հրաժարականն Ետք արտահերթ ընտրութիւններու հասնելու քայլերը՝ Ազգային ժողովի կողմէ վարչապետ չընտրուելու ու խորհրդարանի լուծարման միջոցով: Փաշինեան նշեց, որ ինքը պիտի



Վարչապետ Նիկոլ Փաշինեան իր հրաժարականի ելոյթի ընթացքին

չարունակէ կատարել վարչապետի լիազօրութիւնները:

«Ու եթէ դեկտեմբերին կայանալիք ընտրութիւններում վստահութեան քուէ տաք մեր քաղաքական ուժին, ես կը վերընտրուեմ ՀՀ վարչապետի պաշտօնում», - ըսաւ Փաշինեան:

Ան նաեւ նշեց, որ մտադիր չէ քննարկել այնպիսի սենար, որով խորհրդարանական ուժերը որեւէ

այլ թեկնածու կ'առաջադրեն, որովհետեւ չի կարծեր, թէ անոնք ժողովուրդի եւ անվտանգութեան դէմ գործելու նպատակ ունին: Փաշինեանի խօսքերով՝ ատոնք կարմիր գիծ են նաեւ խորհրդարանական ուժերուն համար, եւ անոնք արդէն յայտնած են, որ պիտի չառաջադրեն եւ պիտի չընտրեն

Շար.ը էջ 5

Երեւանի Մէջ Տեղի Ունեցաւ Ֆրանքոֆոնիայի 17-րդ Գագաթնաժողովը



Ֆրանքոֆոնիայի գագաթնաժողովին մասնակիցներու խմբանկարը

Հոկտեմբեր 11-12-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Ֆրանքոֆոնիայի միջազգային կազմակերպութեան 17-րդ գագաթնաժողովը:

Այս առթիւ Հայաստան ժամանեցին Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն, Գանատայի վարչապետ Ճասթին Թրիւսո եւ 84 այլ երկիրներու ղեկավարներ եւ ներկայացուցիչներ:

Գագաթնաժողովի թեման է «Ապրիլ միասին՝ յարգելով համերաշխութիւնը, մարդասիրական արժէքներն ու բազմազանութիւնը՝ իբրեւ խաղաղութեան եւ բարօրութեան հիմք ֆրանքոֆոնիայի տարածաշրջանին մէջ»:

«Հայաստանի համար մեծ պատիւ է, որ այս գագաթնաժողովի կազմակերպումը վստահուել է Հայաստանին», - Ֆրանքոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի բացման ժամանակ յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեանը, ընդգծելով, որ լիովին կը գիտակցին իրենց վրայ դրուած պատասխանատուութիւնը եւ կը ցանկանան, որ այս իրադարձութիւնը բոլորի յիշողութիւններուն մէջ մնայ որպէս կազմակերպութեան էական կեանքի բացառիկ պահերէն մէկը, ինչպէս նաեւ ֆրանքոֆոնիայի համակցութեան եւ համեմատականութեան մէջ:

Շար.ը էջ 5

«Washington Times Ապատեղեկատուութիւն Կը Տարածէ»

Հոկտեմբեր 10-ին, «The Washington Times» թերթը Հայաստանի մասին նոր յօդուած մը հրատարակած է՝ Anarchy In Armenia (Անիշխանութիւն Հայաստանի մէջ) խորագրին տակ: Գրութեան հեղինակն է Արաբական ծոցի երկիրներէն՝ Պահարէնի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանի պաշտօն վարած Ատամ Էրիլի, որ կը փորձէ Հայաստանը ներկայացնել անիշխանութեան մէջ միւրձուած երկիր, ուր վարչապետ Նիկոլ Փաշինեան կը ձգտի մէկ մարդու իշխանութիւն հաստատել:

Այս կապակցութեամբ ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի առեւտրապետ Գրիգոր Խոտանեան յայտարարեց, որ Washington Times դարձեալ ապատեղեկատուութիւն կը տարածէ: «Ամիս մը առաջ նոյն այս թերթը, մէկ այլ գրութեամբ վարչապետ Փաշինեանը կ'անբաստանէր Ռոպերթ Քոչարեանի հանդէպ վրէժխնդրութիւն կիրարկելու մէջ: Այսօրուայ յօդուածին մէջ եւս զգալի է նախկին նախագահին պաշտպանելու միտումը: Այս մտածել կու տայ մեզի, որ Քոչարեանի կողմէ վերջերս վարձուած PR ընկերութիւնը կը փորձէ նման անհիմն գրութիւններով, Հայաստանի նոր իշխանութիւններուն նկատմամբ ժխտական կարծիք ձեւաւորել, յատկապէս Ամերիկեան պահ»:

Շար.ը էջ 5

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ռոբերտ Քոչարեանի Ամենամեծ Ողբերգութիւնը

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Ռոբերտ Քոչարեանի գրասենեակը տարածել է Bloomberg մեդիաընկերութեանը պաշտօնաթող նախագահի տուած հարցազրոյցի աւելի ծաւալուն տարբերակ: Սակայն մեր ունեցած տեղեկութիւններով՝ հանրութեանը մատուցուած հարցազրոյցի տեքստը, այսպէս ասած, ֆիլտրուել է՝ դրանում թողնելով միայն այն հատուածները, որոնք ձեռնարկ են Քոչարեանին:

Սակայն նոյնիսկ այդ դէպքում Քոչարեանի հարցազրոյցը խիստ վիճահարուց է ու աւելի շատ կարեկցանք է առաջացնում, քան պատկերացում է ձեւաւորում մի մարդու մասին, որն իբրեւ թէ ձգտում է դառնալ Նիկոլ Փաշինեանի իշխանութեան հիմնական այլընտրանքը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը «մարտիմէկեան» իրադարձութիւնների գլխաւոր մասնակիցներից մէկն էր, եւ ընդհանրապէս, քաղաքական հաշիւներ մաքրելու եւ պատմութիւնն իր համար աւելի յարմար համատեքստում վերաշարադրելու փորձերում գլխաւոր գործիչներից մէկը. ասել է Ռոբերտ Քոչարեանը ու յաւելել. «Ես կարծում եմ՝ նրա մօտ ստեղծուել է անձնական ատելութիւն իմ անձի հանդէպ, եւ այդ ատելութիւնն այժմ արտայայտուած է տարբեր պետական ինստիտուտների գործունէութեան մէջ, առաջին հերթին՝ իրաւապահ մարմինները»:

Քոչարեանը կաշուից դուրս է գալիս՝ ապացուցելու համար, որ ինքը անձնական վրէժխնդրութեան, քաղաքական վեհաբանութեան, քաղաքական վեհաբանութեան գոհ է ու իրեն, մեղմ ասած, դնում է ծիծա-

ղելի իրավիճակի մէջ:

Եթէ իսկապէս Քոչարեանի նկատմամբ տեղի ունենար անձնական վրէժխնդրութեան ակտ, ապա կասկածից վեր է, որ նման ծանր մեղադրանքով նա չէր գտնուել ազատութեան մէջ, այլ խօսքով՝ քննչական ու դատական բոլոր մարմինները կոնսոլիդացուած կը կատարէին իշխանութեան առաջին դէմքի պատուէրը, ու երկրորդ նախագահը հաստատ չէր յայտնուել ազատութեան մէջ: Իսկապէս ծիծաղելի է, որ Քոչարեանը հանգիստ հարցազրոյց է տալիս միջազգային հեղինակաւոր լրատուամիջոցի, անկաշկանդ ներկայացնում է իր տեսակետները ու դեռ հնարաւոր է համարում խօսել քաղաքական ճնշումների մասին:

Իրականում՝ Քոչարեանը չի կարողանում քողարկել իր անձնական մեծ թաւախութեան, մտածողութիւնը, նա չի պատկերացնում, որ նախաքննութեան մարմինն ու դատարանները կարող են գործել ոչ թէ իշխանութեան առաջին դէմքի ցուցումով, այլ օրէնքով: Պաշտօնաթող նախագահն իր ընդդիմախօսներին կամ ֆիզիքապէս վերացրել է, կամ էլ՝ շինծու մեղադրանքներով ազատագրել ու հիմա օբիեկտիւօրէն չի կարողանում պատկերացնել, որ ապրում ենք այլ Հայաստանում, որտեղ անձնական վրէժխնդրութիւնն ու վեհաբանութեան թաւախութեան սկզբունքներն:

Ռոբերտ Քոչարեանն անդառնալիօրէն կտրուել է իրականութիւնից, այսպէս կը խոստովանէր, որ եթէ չլինէր Նիկոլ Փաշինեանի իշխանութեան զսպուածութիւնը, ապա ինքը կ'արժանանար հասարակական «դատաստա-

նի» օբիեկտիւ իրականութիւնն այն է, որ ժողովրդի գերակշիռ մասը պահանջում է պատժել նրան ու, մեծ հաշուով, թքած ունի իրաւական ընթացակարգերի վրայ: Ճիշտ հակառակը՝ Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնն է Քոչարեանին ընձեռել պաշտպանութեան լիարժէք հնարաւորութիւն՝ պայմաններ ստեղծելով, որպէսզի տեղի ունենան միանգամայն լեզդիտիմ նախաքննութիւն եւ դատավարութիւն:

Ի դէպ, Քոչարեանի մօտ քաղաքական աղեկավարութեան դեֆիցիտը նկատելի է ամբողջ հարցազրոյցում: Օրինակ՝ նա կարծում է, թէ Փաշինեանը իշխանութիւնը մենաշնորհելու ցանկութիւն ունի: «Ձեռ կարծում, որ իշխանական մի մենաշնորհի անցումը միւս մենաշնորհին կարող է երկրի համար օգտակար լինել: Ի վերջոյ, թաւախութեան յեղափոխութեան ողջ իմաստը քաղաքական մենաշնորհը կազմաքանդելու մէջ էր», - ասել է Քոչարեանը:

Երկրորդ նախագահի մօտ պատկերացումների, ընկալումների թիւրքումբում կայ: Այն, ինչ հիմա կատարուած է Հայաստանում, կապ չունի իշխանութեան մենաշնորհի հետ: Նիկոլ Փաշինեանի բարձր վարկանիշը ու նրա թիմի համոզիչ յաղթանակն է ընտրութիւններում իշխանութիւնը մենաշնորհելու հետ բացարձակապէս աղբիւր չունեն: Նախ՝ իշխանութեան քաղաքական բովանդակութիւնը կանխորոշուած է միանգամայն օրինական ընտրութիւնների միջոցով, բացի դրանից՝ հարկ է պարզաբանել, թէ որն է իշխանութեան մենաշնորհը:

Դա այն է, որ որեւէ գործիչ կամ կուսակցութիւն բարձր վար-

կանիշով ձեւաւորում են իշխանութիւն, թէկուզեւ՝ մոնոլիտ: Իհարկէ, նման իշխանութեան ներսում բալանսը խախտուած է, սակայն դա ինքնին ակտիւ տարիքով դրսեւորում չէ, եթէ երկրում գործում են ընտրական ինստիտուտն ու իշխանութեան փոխարինելիութեան սկզբունքը: Իշխանութեան մենաշնորհի մասին կարող ենք խօսել միայն այս սկզբունքների բացակայութեան դէպքում, այլ խօսքով՝ այն պարագայում, երբ վերացուած են իշխանութիւնն ընտրութիւններով այլ ուժի փոխանցելու լեզու ճանապարհները, կամ փակուած են ընդդիմութեան յաղթանակի բոլոր հեռանկարները: Այդպիսի իրավիճակ եղել է Ռոբերտ Քոչարեանի ու Սերժ Սարգսեանի նախագահութեան շրջանում ու, բարեբախտաբար, այդ համակարգը յեղափոխութեան շնորհիւ կազմաքանդուած է:

Ռոբերտ Քոչարեանը ոչ միայն չի պատկերացնում նոր Հայաստանի բովանդակութիւնը, այլ նա նոյնիսկ մնացել է 2008-ի մակարդակին՝ իր դիրքորոշումները ձեւակերպելով ժամկէտանց իրողութիւնների համատեքստում: Ուստի էլ, թերեւս, Ռոբերտ Քոչարեանի ամենամեծ ողբերգութիւնն է, որովհետեւ նա պարտուել է ոչ այնքան Նիկոլ Փաշինեանին կամ որեւէ այլ ուժի, որքան՝ առաջին հերթին, ժամանակին, այլ խօսքով՝ ենթարկուել է քաղաքական արխիւացման, իսկ այսօր բոլորի ուշադրութեան կեդրոնում է միայն կատարած յանցագործութիւնների հետեւանքով, որոնք այնքան շատ են ու բազմաշերտ, որ կարող են կաթուածահար անել մի ամբողջ իրաւապահ համակարգ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հայաստանում Պաքուի Խաղընկերները. Ով Կը Վերցնի Փաշինեանի Դէմ Նետուած Գնդակը

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Ատրպէյճանի արտգործնախարարութիւնը յայտարարութիւն է տարածել, որում ասում է, թէ յոյս ունի, որ խորհրդարանի արտահերթ ընտրութիւնից յետոյ Հայաստանի իշխանութիւնը կը հասկանայ, որ երկրի զարգացման համար այլընտրանք չկայ, քան «Ատրպէյճանի գրաւեալ տարածքներից զօրքը դուրս բերելը»:

Ատրպէյճանը Արցախի հարցում ինտենսիւ բանակցութիւնն էր ակնկալում Ապրիլին Հայաստանում «ընտրութիւններից» յետոյ, ակնկալելով, որ Սերժ Սարգսեանը «երրորդ ժամկէտի» ներքին լեզդիտիմութեան բացակայութիւնն արտաքինով փոխարինելու համար պատրաստ կը լինի գնալ լուրջ գիշումների, ինչպէս 2008 թուականին ֆոտոպոլիսի դիւանագիտութեան հարցում:

Սակայն, Սերժ Սարգսեանը գիշեց իշխանութիւնը, տհաճ անակնկալ մատուցելով ինտենսիւ բանակցութեան ակնկալիքով Հոկտեմբերին կաշանալիք հերթական նախագահական ընտրութիւնն ապրիլ տեղափոխած Ալիեւին, որն ըստ երեւոյթին պատրաստուած էր այդ միջոցով ազատուել աւելորդ բեռից եւ պատրաստուել Հայաստանի հանդէպ ռազմա-հոգեբանական շանտաժի ու:

Ընդ որում, ինչ որ առումով Պաքուի մօտ դա ստացուած էր,

նաեւ հայաստանեան նախորդ իշխանութեան որոշակի շրջանակների աջակցութեամբ, որոնք Սերժ Սարգսեանի հրաժարականից յետոյ փորձում էին Հայաստանում գեներացնել միտքը, թէ նոր իշխանութիւնը կամ նոր վարչապետը չի կարող ապահովել անվտանգութիւնը, կան խնդիրներ արտաքին բոլոր, այդ թւում ռուսական ուղղութեամբ, իսկ Նիկոլ Փաշինեանն էլ գալիս է «տարածք յանձնելու»:

Փաշինեանին յաջողուց չէգործացնել այդ ամենը, կարգաւորել արտաքին յարաբերութիւնները, մասնաւորապէս առաջին հերթին Ռուսաստանի հետ, եւ աւելին՝ յստակօրէն դնել Հայաստանի ու ռեզիդենտ անվտանգութեան համար Ռուսաստանի պատասխանատուութեան հարցը, ինչը վկայում էր, որ այդ խնդրում Մոսկուայի հետ յարաբերութեան առումով Երեւանը դուրս է եկել որոշակի նոր նշանոցի: Ընդ որում, դա գուցէ յաջողուել էր ոչ միայն ներքին բարձր լեզդիտիմութեան, այլ Մոսկուայի խնամակալութիւնից հրաժարուելու շնորհիւ: Այսինքն, Երեւանը Ռուսաստանի առաջ դրել է բացառապէս ռազմա-քաղաքական խնդիր, որը խորքային առումով բխում է երկուստեք շահից՝ հաւատարմութիւն Հայաստանի հանդէպ անվտանգային պարտաւորութեանը, եւ ոչ մի այլ խնամակալական հայց երեւանից:

Հայաստանի հանդէպ ռազմահոգեբանական ճնշմանը Ռուսաստանի իշխանութեանը, մասնաւորապէս ՌԴ նախագահին ներգրաւելու հարցում Ատրպէյճանը չունեցաւ նոյն յաջողութիւնը, ինչ ունեցաւ այդ հարցում Հայաստանից որոշակի նախկին համակարգային սեզմենտներ ներգրաւելու տեսանկիւնից՝ նրանց կամայ թէ ակամա ներգրաւուելու առումով:

Բանն այն է, որ Հայաստանում թաւախ յեղափոխութիւնն ու նաեւ Ռուսաստանի հետ յարաբերութիւնը նոր տրամաբանութիւն տեղափոխելու հանգամանք Ռուսաստանին տուել է Հայաստանի հարցում մտավախութիւն չունենալու, միաժամանակ Ատրպէյճանի հարցում աւելի ամուր դիրք ունենալու հնարաւորութիւն, հաշուի առնելով, որ ի դեմս Ատրպէյճանի Մոսկուան գործ ունի նաեւ իր «ոխերիմ բարեկամներ» թուրքիայի եւ իսրայէլի հետ, գումարած նաեւ Իրանը:

Պաքուն փորձում էր նախագահի Ապրիլի արտահերթ ընտրութեամբ ժամանակն առաջ տալ, բայց Հայաստանում ապրիլեան զարգացումները ժամանակից հետ գցեցին Ատրպէյճանին:

Միաժամանակ թէ Արեւմուտքից, թէ Ռուսաստանից Պաքուն ուղղուեցին «նաւթագալիս» բռնուսների մասին ակնարկ-



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՍԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱՏԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ



Հայկ Մարութեանը Ստանձնեց Երեւանի Քաղաքապետի Պաշտօնը

Հոկտեմբեր 13-ին տեղի ունեցած Երեւանի նորընտիր քաղաքապետ Հայկ Մարութեանի երդմնակալութեան արարողութիւնը:

Խորհրդանշական լանջաշղթան քաղաքապետին յանձնած են աւագանիի անդամ երգիչ Արթուր Իսախանյանը եւ Երեւանի պատուոյ քաղաքացի երգահան Տիրգրան Մանուկեանը: Հնչած է Երեւանի քայլերգը:

41-ամեայ Հայկ Մարութեանը երդուած է պահպանել Սահմանադրութիւնը, օրէնքները, Երեւանի աւագանիի որոշումները, ազնուօրէն եւ բարեխղճօրէն կատարել քաղաքապետի լիազօրութիւնները: Ան նշած է, որ պատասխանատուութեան զգացումը մեծ է: «Կանգնած եմ այստեղ, քանի որ այդպէս որոշած է ժողովուրդը: Ես մէկ առ մէկ կը յիշեմ բոլոր այն խոստումները, որոնք տուած եմ երեւանցիներուն: Իր քաղաքն ու երկիրը սիրող մարդը այլ բան չի կրնար ընել, իսկ ես կը սիրեմ մեր Երեւանը», ըսած է ան:

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանը ներկայ գտնուած է Երեւանի նորընտիր քաղաքապետ Հայկ Մարութեանի երդմնակալութեան արարողութեան:

Վարչապետ Փաշինեան իր ելոյթին նշած է, որ իրենք պէտք է երաշխաւորեն, որ կառավարութեան, Երեւանի քաղաքապետարանի

նին մէջ գողեր չկան, մարդիկ չկան, որոնք կը գողնան ժողովուրդին վճարած հարկերը: Ըստ վարչապետին, ժողովուրդը պէտք է համոզուած ըլլայ, որ իր տուած հարկերը չեն գողցուիր: «Այո՛, տակաւին անարդիւնաւէտ օգտագործման դէպքեր կան, ատիկա տակաւին ճամբայ է, որ մենք պէտք է անցնինք, այդ խնդիրը պէտք է լուծենք, բայց իւրաքանչիւր քաղաքացի իր վճարած իւրաքանչիւր լումային պէտք է վերաբերի այնպէս, ինչպէս այն բանին, որ այդ գումարը կը դնէ իր տան այն դարակին մէջ, որ նախատեսուած է ընտանիքի կարիքներուն համար: Մեր քաղաքական խմբակին ուղղուած մեծագոյն դիտողութիւնը այն է, որ անիկա շատ երիտասարդ է», ըսած է վարչապետ Փաշինեան:

Ան նշած է նաեւ, որ քաղաքական իմաստով պէտք է առաջնորդուին նախապէս որեւէ ներգրաւուածութիւն ունեցած մարդիկը չմերժելու սկզբունքով, քանի որ մերժելը ինք կը նկատէ քաղաքական այլամերժութիւն: «Մենք պէտք չէ թոյլ տանք Հայաստանի մէջ քաղաքական այլամերժութեան գոյութիւնը: Մենք պէտք չէ առաջնորդուինք ու չենք առաջնորդուիր հինը, նախկինը ժխտելու, ջնջելու եւ քանդելու մղումով», ընդգծած է վարչապետ Փաշինեան:

ԱԸԾ-ն Բացայայտած է Մաքսային Պետական Կոմիտէի Նախկին Նախագահի Ընտանիքին Պատկանող Հիւրանոցներու Կառուցման Ֆինանսաւորման Աղբիւրները

Ազգային անվտանգութեան ծառայութիւնը (ԱԱԾ) կը տեղեկացնէ, որ ԱԱԾ քննչական վարչութեան ներս չարուցուած է քրէական գործ՝ Մաքսային պետական կոմիտէի նախկին նախագահ Արմէն Աւետիսեանի կողմէ ձեռնարկատիրական գործունէութեան ապօրինի մասնակցելու եւ յանցաւոր ճանապարհով ստացուած առանձնապէս խոշոր չափերով գումարները օրինականացնելու (փողերու լուացում) դէպքի առթիւ՝ նախատեսուած Քրէական օրէնսգիրքի 310-րդ յօդուածով եւ 190-րդ յօդուածի 3-րդ մասի 1-ին կէտով:

ԱԱԾ-ն նշած է, որ ձեռնարկուած հետախուզական միջոցառումներու եւ քննչական գործողութիւններու արդիւնքով ստացուած նախնական տուեալներուն համաձայն, Արմէն Աւետիսեանը, 2001 թուականէն զբաղեցնելով Մաքսային պետական կոմիտէի նախագահի պաշտօնը, իր հետ գործնական կապերու մէջ գտնուած անձանց հետ համատեղ ձեռնարկած եւ հիմնական կանխիկ գումարներով ֆինանսաւորած է Երեւանի Ազատութեան պողոտայի մէջ գտնուող «Կոլտրն Փալաս» հիւրանոցային համալիրի կառուցումը: Իր եւ միւսներու մասնակցութիւնը, ինչպէս նաեւ ֆինանսաւորման աղբիւրը քօղարկելու նպատակով հիւրանոցի կառուցումը վերագրուած է Կիպրոսի «օֆշորային» գօտիին մէջ հիմնադրուած «Ռիվերհիլ Հոլտինկս» ՍՊ ընկերութեան՝ հանրութեան այդ կերպ մոլորեցնելով, թէ հիւրանոցի կառուցման համար ծախսուած միլիոնաւոր ԱՄՆ տոլարները իբր Հայաստանի մէջ օտարերկրեան ներդրում են:

ԱԱԾ նաեւ ներկայացուց Արմէն Աւետիսեանի այլ հիւրանոցներ կառուցելու ֆինանսական կասկածելի աղբիւրները:

ՍԴՀԿ Կը Պահանջէ Ռազմավարական Նշանակութեան Հիմնարկներու Ազգայնացումը

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի վարչութիւնը հրապարակած է յայտարարութիւն մը՝ պահանջելով ռազմավարական նշանակութիւն ունեցող հիմնարկներու ազգայնացումը: ՍԴՀԿ յայտարարութեան մէջ ըսուած է.

«Անկախութիւնից ի վեր Հայաստանը բռնեց վաչրի կապիտալիզմի ուղին, ինչի արդիւնքում մինչ օրս մասնաւորեցուցինք, մաս առ մաս վաճառուցինք արդիւնաբերական, տնտեսական երբեմնի համաժողովեանական նշանակութեան խոշոր կառուցուածքները, ինչպէս նաեւ ռազմավարական եւ էներգետիկ կարեւորագոյն նշանակութեան օբյեկտները:

«Արդիւնքում Հայաստանում տեղ գտած մեծ քանակութեամբ գործադրուած ՍԴՀԿ, անձերի կամ կազմակերպութիւնների կողմից տնտեսական մոնոպոլիան, հասարակութեան սոցիալական բեւեռացումը եւ պետութիւնը որպէս իր քաղաքացիների կեցութեան ապահովող, երաշխաւոր կորցրեց իր ազդեցութիւնն ու լծակները:

«Ելնելով Հայաստանում վերջին շրջանում տեղի ունեցած փոփոխութիւններից Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը



գտնում է, որ այժմ ստեղծուել են բաւարար պայմաններ աստիճանաբար պետականացնելու կամ պետական կառավարման տակ առնելու ազգային եւ պետական կարեւորութեան էներգետիկ եւ ռազմավարական օբյեկտները, ինչն ըստ մեզ անհրաժեշտութիւն է հանդիսանում պատերազմի վտանգով ապրող եւ անկանխատեսելի հարեւաններով շրջապատուած մեր հայրենիքի համար:

«Մեր առաջարկն է ներառել վերը նշուած լուծումները գալիք կառավարութեան ծրագրում, այս քայլերը ոչ միայն թոյլ կը տան շտկել արդէն գոյացած իրավիճակը, այլեւ հակասօրէն կնուազեցնեն նախկինում եղած կոռուպցիայի, մոնոպոլիայի, բեւեռացման ուիւկերը:

Յունան Պօղոսեանի Նշանակումը Յարուցած է Որոշ Իրաւապաշտպաններու Տարակուսանքը

Հայաստանի իրաւապաշտպանները քննադատած են Սիւնիքի մարզպետի պաշտօնին Հայաստանի նախկին փոխօստիկանապետ Յունան Պօղոսեանի նշանակումը:



Սիւնիքի նորանշանակ մարզպետ՝ Յունան Պօղոսեան

Մի նշուելով վարչապետ Նիկոլ Փաշինեանը պարզաբանած է, որ Հայաստանի մէջ պէտք չէ քաղաքական ռասիզմ ըլլալ, եւ օրէնքի առաջ բոլորը պէտք է հաւասար ըլլան. - «Ես շատ կարեւոր եմ համարում, որպէսզի երկրում տեղի ունեցած յեղափոխութեան արդիւնքում որեւէ մէկը իր կեանքը աւարտուած չհամարի Հայաստանի Հանրապետութիւնում», ըսաւ վարչապետը:

Կառավարութեան նիստէն առաջ լրագրողներուն հետ զրոյցի ժամանակ Յունան Պօղոսեանը պարզաբանած էր, որ նոր Հայաստանի կողմնակիցն է եւ նախապէս ալ ծառայած է ժողովուրդին. - «Ամէն ինչ անելու եմ, որ էդ նոր Հայաստանում լաւ լինի»:

Վարչապետի այս նշանակումը քննադատող իրաւապաշտպանները, մինչդեռ, տարակուսած են, թէ ինչպէս կրնայ Սերժ Սարգսեանի օրօք ոստիկանութեան պետի առաջին տեղակալի պաշտօնը զբաղեցուցած Պօղոսեանը իշխանափոխութեանէն ետք փոխած ըլլալ աշխատելաճճը, որ դրսեւորուած է յատկապէս վերջին տարիներուն տարբեր բողոքի ցոյցերու ժամանակ:

Արթուր Սաքունցը շեշտած է, որ, ի տարբերութիւն ԱԱԾ տնօրէնի

նի եւ ոստիկանապետի նշանակման պատճառաբանութեան, թէ անոնք հեռու են կաշառակերութեան սխեմաներէն, Յունան Պօղոսեանի նշանակման պարագային վարչապետը այլ պատճառաբանութիւն կը բերէ՝ քաղաքական ռասիզմը: Մինչդեռ Պօղոսեանը, ինչպէս ընդգծած է Սաքունցը, քաղաքական գործիչ չէ եղած, ուստի վարչապետի այս պատճառաբանութիւնը վիճալարոյց է. - «Ես չեմ կարող վստահել այն նշանակմանը երբ որ գործ ունենք բարձրաստիճան պաշտօնեայի հետ, իրաւապահ մարմնի ղեկավարի տեղակալի հետ, որի լմարմնի գործողութիւնները քաղաքացիների նկատմամբ յանգեցրել են խախտումների: Եթէ մենք յայտարարում ենք հաշտութեան մասին, քաղաքական ռասիզմ թոյլ չտալու մասին, ապա այդ դէպքում, կը ներէք, Սերժ Սարգսեանին էլ նշանակել, Վովա Գասպարեանին էլ նշանակել, բոլորին... Հանրապետական կուսակցութեան, նախկին իշխանութիւնների ժամանակ աշխատած պաշտօնատար անձանց, բոլորին նշանակել»:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանը Կրցած է Կանխել Իրանի Մեջ Նախատեսուած Վտանգաւոր Համաժողովը

Իրանի մէջ «Միջազգային համաժողով. Ղարաբաղը իսլամական (հող) տարածք է» հակահայկական թեմայով համաժողովը 13 Հոկտեմբերին չէ կայացած:

«Ա1+»-ի տուեալներով՝ Իրանական Չանճան քաղաքին մէջ նախատեսուած յայտնի հակահայկական համաժողովը չեղեալ յայտարարուած է ՀՀ արտաքին գործոց նախարարութեան եւ Անվտանգութեան խորհուրդի քարտուղարի համատեղ ջանքերով: Հայկական կողմը իր մտահոգութիւնները փոխանցած է իրանական կողմին, որմէ ետք յայտնի դարձած է, որ միջոցառումը պիտի չկայանայ:

Հակահայկական եւ հակարացախեան թեմայով այս համաժողովին պիտի մասնակցէին կարգ մը երկիրներու, այդ շարքին՝ Ռուսաստանի, Վրաստանի եւ Լիբանանի ծայրայեղ կրօնական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Առաւել մտահոգիչ էր այն փաստը, որ համաժողովի իրանական կողմի կազմակերպիչները կը ներկայացնէին պետական եւ կրօնական շրջանակներ:

Համաժողովի նպատակն էր մասնաւորապէս՝ «Աշխարհի իսլամ ատրպէյճանցիները համախմբել Ղարաբաղի ազատագրման գործին: Ճանչնալ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան մէջ իսլամական երկիրներու մասնակցութիւնը եւ տեսակետներ արտայայտելու իրաւունքը»:

Համաժողովի կազմակերպիչները որպէս զեկոյցներու հիմնական թեզեր առաջարկած էին՝ օրինակ՝

- Ղարաբաղի ազատագրման գործին մէջ նահատակութեան եւ իսլամական ճիհատի դերի կարեւորութեան եւ անոնց անհրաժեշտութեան մասին:

- Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան մէջ իսլամ հոգեւորականներու եւ իմամ Ալլիի դերակատարութեան մասին:

- Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցին մէջ Իրանի իսլամական Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան միջեւ համագործակցութեան խորացման ռազմավարութիւնները, եւ այլն:

Ալիեւ կը Պնդէ որ Բանակցութիւնները Պիտի Ըլլան Բացառապէս Հայաստանի եւ Ատրպէյճանի Միջեւ

Ղարաբաղեան խնդրի շուրջ բանակցութիւնները պիտի ըլլան բացառապէս Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ, յայտարարած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ պնդելով, թէ հայկական կողմը փորձած է փոխել բանակցութիւններու ձեւաչափը, սակայն յաջողութեան չէ հասած:

«Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներու միջեւ կայացած երկու հանդիպումները, ինչպէս նաեւ վերջին շրջանին տեղի ունեցած իրադարձութիւնները կը վկայեն, որ բանակցութիւններու ձեւաչափը կը

մնայ անփոփոխ, եւ որ այս հակամարտութիւնը պէտք է մօտ ապագային կարգաւորուի միջազգային սկզբունքներու եւ նորմերու հիման վրայ, Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան շրջագիծէն ներս», - պնդած է Ալիեւ:

«Յոյսով եմ, որ Հայաստանի նոր ղեկավարութիւնը կառուցողականութիւն կը դրսեւորէ իր քաղաքականութեան մէջ, եւ մեր հողերը շուտով կ'ազատագրուին գրաւողներէն», - ըսած է Ատրպէյճանի նախագահը կառավարութեան ընդլայնուած նիստի ժամանակ:

Արցախ Ացելած Ռուսաստանցի Կանայք Յայտնուած են Ատրպէյճանի «Սեւ Ցուցակի» Վրայ



Աննա Յակոբեան եւ ռուսաստանցի կանայք Լեռնային Ղարաբաղ այցելութեան ընթացքին

Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարութիւնը ընդարձակած է այն անձերու «Սեւ ցուցակը», որոնց արգելուած է Ատրպէյճան մտնելը, այն պատճառով, որ այցելած են Լեռնային Ղարաբաղ:

Ցուցակին մէջ յայտնուած են Ռուսաստանի Պետական տուժալի

միջազգային գործերով կոմիտէի փոխնախագահ, իշխող «Ետինախ Ռոսիա» կուսակցութեան պատգամաւոր Սվեթլանա Ժուրովան եւ գրական մրցանակներու դափնեկիր, ռուս յայտնի գրող Լիւսմիլա Ուլիցկայի:

Ուղեւորութեան արդիւնքներով «Սեւ ցուցակին» մէջ ընդհանուր ներառուած է 8 մարդ, իսկ յատկապէս՝ բժշկական օգնութեան «Հաւատ» հիմնադրամի հիմնադիր Աննա Ֆետերմեսէրը, «Կամաւորներ» յանուն որբ երեխաներու օգնութեան» բարեգործական հիմնադրամի ղեկավար Ելենա Ալշանսքայան, «Կանանց երկիւստութիւն» կուսակցութեան նախագահ Ելենա Սեմէրիֆովան, լրագրողներ Քատերինա Կորտեւեան եւ Քիրա Ալթմանը, «Երազանքի դահուկ-

Նիկոլ Փաշինեանը եւ Ճասթին Թրիւսօն Բննարկած են Հայ-Գանատական Յարաբերութիւնները



Գանատայի վարչապետ Ճասթին Թրիւսօն եւ Նիկոլ Փաշինեան պաշտօնական այցելութեան ընթացքին

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը Բաղրամեան 26ի մէջ պաշտօնապէս ընդունած է Գանատայի վարչապետ Ճասթին Թրիւսօն: Ընդունելութեան պաշտօնական արարողութեան ներկայ եղած են նաեւ դեսպանները, ՀՀ Արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեանը:

Յիշեցնենք, որ Գանատայի վարչապետը Հայաստանի կը գտնուի պաշտօնական այցով: Աւելի վաղ ան ներկայ

գտնուած էր Ֆրանքֆոնիայի գագաթնաժողովի միջոցառումներուն:

Ճասթին Թրիւսօն հանդիպում ունեցած է նաեւ նախագահ Արմէն Սարգսեանի եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդի հետ: Ի պատիւ Գանատայի վարչապետին կը նախատեսուի պաշտօնական ընթրիք Նիկոլ Փաշինեանի հրաւերով: Նախատեսուած է նաեւ այց Ծիծեռնակաբերդի յուշահամալիր:

Էմանուէլ Մաքրոն Այցելած է Հայոց Ցեղասպանութեան Ձոհերու Յուշահամալիր



Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն եւ տիկինը ծաղիկներ կը գետնէն Եղեռնի Յուշարձանին

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը Ծիծեռնակաբերդի մէջ յարգանքի տուրք մատուցած է Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Մաքրոնը Հայոց ցեղասպանութեան զոհերու յուշահամալիրը գացած էր Հայաստանի մէջ Ֆրանքֆոնիայի գագաթնաժողովի շրջագիծէն ներս Հայաստան այցի ժամանակ:

Նախագահ Մաքրոնին ուղեկ-

ցած էին նաեւ ՀՀ արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեանը, Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Ժոնաթան Լաքոթը, ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Յարութիւնեանը:

Ֆրանսայի նախագահը նաեւ շրջայց կատարած է Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկ: Այնուհետեւ Էմանուէլ Մաքրոնը Ծիծեռնակաբերդի ծառուղիին մէջ խորհրդանշական եղեւնի տնկած է:

րով «Սեւ ցուցակին» մէջ ընդհանուր ներառուած է 8 մարդ, իսկ յատկապէս՝ բժշկական օգնութեան «Հաւատ» հիմնադրամի հիմնադիր Աննա Ֆետերմեսէրը, «Կամաւորներ» յանուն որբ երեխաներու օգնութեան» բարեգործական հիմնադրամի ղեկավար Ելենա Ալշանսքայան, «Կանանց երկիւստութիւն» կուսակցութեան նախագահ Ելենա Սեմէրիֆովան, լրագրողներ Քատերինա Կորտեւեան եւ Քիրա Ալթմանը, «Երազանքի դահուկ-

ներ» հիմնադրամի տնօրէն Օլկա Շիլովան, Ռուսաստանի Պետական տուժալի պատգամաւոր Սվեթլանա Ժուրովան եւ գրող Լիւսմիլա Ուլիցկայի, որուն «Յակոբի սանդուղք» վէպը նախապէս թարգմանուած է ատրպէյճաներէն:

Յիշեցնենք, որ ռուսաստանցի կանայք Լեռնային Ղարաբաղ այցելած էին վարչապետ Նիկոլ Փաշինեանի տիկնոջ՝ Աննա Յակոբեանի խաղաղարար նախաձեռնութեան շրջանակէն ներս:

Համաշխարհային Ներդրումային Համաժողովին Հայաստանը Պիտի Ներկայանայ Սեփական Տաղաւարով



22-էն 26 Հոկտեմբերին, Ժընևեի մէջ տեղի պիտի ունենայ ՄԱԿ-ի Առևտուրի եւ զարգացման համաժողովի (UNCTAD) երկամեայ պարբերական թեմայի կազմակերպուող վեցերորդ «Համաշխարհային ներդրումային համաժողովը» (World Investment Forum 2018):

Չուրիցերիոյ Համադաշնութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան առևտրական ներկայացուցիչ Հայկ Յովհաննիսեանի նախաձեռնութեամբ Հայաստանը Համաժողովի «Ներդրումային ակունքները» մէջ պիտի ներկայանայ սեփական տաղաւարով: Յովհաննիսեանը Հայաստանի ներդրումային գրաւչութիւնը պիտի ներկայացնէ նաեւ Արեւելեան Եւրոպային եւ Կեդրոնական Ասիային նուիրուած յատուկ նիստին:

Համաշխարհային ներդրումային համաժողովը ներդրումներու եւ կայուն զարգացման ոլորտին նուիրուած աշխարհի կարեւորագոյն եւ ամենաբազմամարդ համաժողովն է, բարձր մակարդակի հարթակ, ուր կը քննարկեն այս ոլորտի հիմնախնդիրները, կ'որոնեն հնարաւորութիւններ ու գործընկերներ: Նախորդ տարիներուն այս Համաժողովը հաւաքած է մինչեւ 160 պետութիւններու չորս հազարէ աւելի ներկայացուցիչներ, այդ շարքին տասնեակ նախագահներ, վարչապետեր, նախարարներ:

Հայկ Յովհաննիսեանը նշած է. «Առաւել կարեւոր է, որ մասնա-

կիցներու շարքին են բազմաթիւ անդրազգային ընկերութիւններու, ներդրումային ֆոնտերու խոշոր ընկերութիւններու ղեկավարներ, ինչը հնարաւորութիւն կու տայ չսահմանափակուիլ միջազգային տնտեսական քաղաքականութեան ու ներդրումներու վերաբերյալ տեսական քննարկումներով, այլ փնտռել ուժալ գործընկերներ, խօսիլ պիզնեսի ներկայացուցիչներու հետ, Հայաստանը ներկայացնել գործնական գետնի վրայ: Այս համաժողովի ուղեւորներէն է նաեւ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման թիրախներ 2030» ծրագիրը, որու իրականացումը կ'ենթադրէ գալիք 12 տարուան ընթացքին 2.5 թրիլիոն տոլարի ներդրում զարգացող երկիրներուն: Ի դեպ, Համաժողովի շրջանակէն ներս կայանալիք «Կրթութիւնը լիարժեքութեամբ վեցերորդը»-ին UNCTAD-ի կողմէ հրատարակուած է նաեւ ՀՀ Նախագահ Արմէն Սարգսեանը:

Արեւելեան Եւրոպային եւ Կրդոնական Ասիային նուիրուած նիստի օրը՝ 23 հոկտեմբերին, ՄԱԿ-ի մէջ Պելաուսի մշտական ներկայացուցչութեան հետ նախաձեռնած ենք նաեւ Հայաստան-Պելաուս-Չուրիցերիա եռակողմ գործարար երեկոյ: Հայաստանը եւ Պելաուս-Չուրիցերիա եւրոպային կազմակերպութեան հետ հանդիսանալով եՍՏՄ անդամ երկիրներ, այս նոր ձեւաչափով առաւել մեծ ուշադրութիւն կը գրաւեն, կը ներկայացնեն մեր միասնական շուկայի գրաւչութիւնը»:

Փաշինեան Ներկայացուց իր Հրաժարականը

Շարունակուած էջ 1-էն

որեւէ վարչապետ:

Վարչապետի հրաժարականի ելոյթէն ետք յայտարարուեցաւ որ, նախագահ Արմէն Սարգսեան ընդունած է կառավարութեան հրաժարականը՝ հիմք ընդունելով Սահմանադրութեան 130-րդ յօդուածը: Նախքան իր հրաժարականի

ելոյթը, Փաշինեան հանդիպում ունեցած էր «Ելք» դաշինքի պատգամաւորներուն հետ, որոնց տեղեկացուցած էր իր յառաջիկայ քայլերու մասին: Վարչապետը նաեւ չէ բացառած, որ ինք դարձեալ թեկնածու առաջադրուի, սակայն չընտրուելու պայմանով, որպէսզի կարելի ըլլայ լրացնել օրէնքը կարգ մը պահանջները:

«Washington Times Ապատեղեկատուութիւն Կը Տարածէ»

Շարունակուած էջ 1-էն


պանողական շրջանակներուն մօտ, որոնք բանբերը կը նկատուի այս հրատարակութիւնը: Նաեւ պէտք է աւելցնել, որ Washington Times-ի էջերուն վրայ յաճախակի լոյս կը տեսնեն թուրքիոյ եւ Ատրպէյճանի տեսակէտները պաշտպանող յօդուածներ: Այս բոլորի իրար մօտ բերելով, յստակ կը դառնայ Washington Times-ի հետապնդած

նպատակները՝ մի քանի ուղղութիւններով», ըսաւ Խոտանեան ու աւելցուց, որ Հնչակեան Կուսակցութեան կից գործող Հայ Ամերիկեան Խորհուրդը կը պատրաստուի պատասխան գրութիւն մը ուղարկելու Washington Times-ի խմբագրութեան, որպէսզի նման պատեղեկատուութիւնները անպատասխան չմնան եւ տարածում չգտնեն աւելի լայն հասարակութեան մօտ:

Ֆրանսական Charlie Hebdo Անսագիրը Ծաղրած է Ազնաւուրը՝ Զայրացնելով Շանսոնտի Ընտանիքը

Ֆրանսական Charlie Hebdo երգիծական ամսագիրը իր շապիկին վրայ պատկերած է Շարլ Ազնաւուրը: Նկարին մէջ Ազնաւուրը պատկերած է անկողինին մէջ ու կը պատրաստուի մկրատով կտրել թթուածինի խողովակները: Նկարին վրայ գրուած է «Շուտով պիտի մեռնիս»:

Այս նկարը գայրացուցած է Ազնաւուրի ընտանիքը: Ազնաւուրի աւագ դուստրը՝ Սեդա Ազնաւուր, ֆէյսպուքի իր էջին մէջ գրած է. «Ազնաւուր ընտանիքը Ֆրանսայի մէջ բարձր կը գտնուի ձեր նողկալի, գարշելի Charlie Hebdo-էն: Դեռ կը նախանձիք: Մենք պատուաստուած ենք, Շարլի: Ես յոյս ունիմ, այսպիսի նկար մը ընել ձեր ընտանիքէն մէկու մը մահուան կապակցութեամբ: Ինծի հաճելի կ'ըլլայ տեսնել ձեր բերանները», - գրած է Սեդա Ազնաւուր: Յիշեցնենք, որ 7 յունուար



2015-ին Մուհամատ Մարգարէի ծաղրանկարի համար Charlie Hebdo-ի խմբագրութեան վրայ տեղի ունեցաւ յարձակում, որու հետեւաքնով մահացաւ տասներկու մարդ, որոնց մէջ՝ 10 լրագրող եւ երկու ոստիկան, եւս 11 մարդ վիրաւորուեցաւ:

Կլենտէյլի Հայկական «Արարատ» Ճաշարանի Մօտ Կրակոցներ Հնչած Են.

1 Անձ Սպաննուած Է, Եւս 1-ը՝ Վիրաւորուած

ԱՄՆ Կլանստէյլ քաղաքի հայկական «Արարատ» ճաշարանին մօտ շաբաթօր կրակոցներ հնչած են, ինչի հետեւանքով 1 անձ սպաննուած է, եւս 1-ը՝ վիրաւորուած:



KTLA.com կայքի փոխանցմամբ, սպաննուածը մօտ 50 տարեկան տղամարդ է: Տուժածը թեթեւ վնասվածքներ ստացած է: Իրաւապահները կը պարզեն սպաննուածի ինքնութիւնն ու տեղի ունեցածի դրդապատճառները: «Նախաքննական մարմինը կը հարցաքննէ մարդոց, որոնք հաւաքուած եղած են այդ օրը «Արարատ» ճաշարանի մէջ: Այստեղ

աւելի քան 100 մարդ եղած է եւ պէտք է հարցաքննել անոնցմէ իւրաքանչիւրը», - կայքին յայտնած են ոստիկանութեանէն: Նշենք, որ «Արարատ» ճաշարանի ղեկավարութիւնը ֆէյսպուքեան էջի միջոցով յայտնած է, որ տեղի ունեցածը որեւէ կապ չունի ճաշարանի եւ իրենց յաճախորդներուն հետ:

Երեւանի Մէջ Տեղի Ունեցաւ

Շարունակուած էջ 1-էն

րաշխութեան կարեւոր դրսեւորում: «Հայաստան բառը շատ նուրբ եւ յուզիչ զգացումներ կ'առաջացնէ ֆրանսացիներու հոգիին մէջ», - Երեւանի մէջ Ֆրանսոֆոնիայի միջազգային կազմակերպութեան 17-րդ գագաթնաժողովի բացման իր ելոյթի ժամանակ ըսաւ Ֆրանսայի նախագահ էմանուէլ Մաքրոնը՝ նախ շնորհակալութիւն յայտնելով վարչապետ Նիկոլ Փաշինեանին ընդունելութեան համար, ապա շնորհատրեալ կազմակերպման համար»:

«Այսօր մեծ ընտանիք մը հաւաքուած է Երեւանի մէջ, մոլորակի մաշտաբներով ընտանիք մը, որ ներկայ է բոլոր մայրցամաքներուն մէջ: Մենք բոլորս պատկանելով այդ ընտանիքին՝ չունինք մաշկի նոյն գոյնը, մեր աստուածները չունին նոյն անունները, մեզմէ ոմանք նաեւ չեն հաւատար Աստուծոյ: Մենք ունինք տարբեր աղբիւրներէ բխող պատմութիւն, մեր երգերը նման չեն իրար, անգամ եթէ նոյնանման հնչո-

ղութիւն ունին: Մեր միջեւ եղած են վէրքեր, որոնք նոր կը սկսին փակուիլ», - յայտարարեց Ֆրանսայի նախագահը:

Համաժողովի մասնակիցները ընդունեցին Երեւանեան Հոչակապի մը: Խօսելով ընդունուած փաստաթուղթերու մասին՝ ՀՀ արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեան յայտնեց որ, Երեւանեան Հոչակապի ղեկավարը ուղեւոր պիտի ըլլայ նաեւ յառաջիկային Ֆրանսոֆոնիայի Միջազգային կազմակերպութեան աշխատանքներուն համար: Զօհրապ Մնացականեանի խօսքերով, որպէս Ֆրանսոֆոնիայի մէջ նախագահող երկիր՝ Հայաստանը նախագահութեան ընթացքին պիտի իրականացնէ շաբթ մը նախաձեռնութիւններ նաեւ այլ կազմակերպութիւններու հետ, ինչպիսին է նաեւ Եւրոխորհուրդը:

Ժողովին ներկայ եղող ղեկավարները այցելեցին Ծիծեռնակաբերդի Եղեռնի Յուշարձան, ինչպէս նաեւ ներկայ եղան Հանրապետութեան հրապարակին վրայ տեղի ունեցած համերգին:

Լսելու Կամ... Խօսելու Համար. Ճոն Պոլթոնը Յառաջիկային Հայաստան Պիտի Այցելւ

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Բոլորովի անսպասելի չէր, որ ամերիկացի բարձրաստիճան պատասխանատու մը Հայաստան այցելէ: Յատկապէս եթէ հաշուի առնենք, վերջին ամիսներուն տեղի ունեցած զարգացումները ու նաեւ մէկէ աւելի մակարդակներու վրայ ամերիկացիներուն կողմէ Հայաստանի հասցէին հնչած դրական գնահատականները:

Բնականակար այդ գնահատականներու ամէնէն ուշագրաւը կը պատկանի Հայաստանի մօտ ԱՄՆ արտակարգ եւ լիազօր դեսպան Ռիչարտ Միլլսի, որ յառաջիկայ օրերուն իր պաշտօնավարման աւարտին բերումով պիտի հեռանայ Հայաստանէն:

Այստեղ անշուշտ պէտք է նաեւ յիշեցնել, որ մասնաւորապէս «Թաւշեայ յեղափոխութիւն»էն շաբաթներ անց խօսակցութեան թեմա կը դառնար այն հարցադրումը, որ արդեօ՞ք նոր իշխանութիւնները մեծ շրջադարձ կատարելով պիտի «նետուին» ամերիկեան ափ:

Այդ խօսակցութիւնները շատ արագ կերպով շոգիացան, երբ վարչապետ Նիկոլ Փաշինեան շատ տեղին քայլով մը յայտարարեց, որ Ռուսաստանի հետ ուղղակի արական գործընկերութիւնը կը գտնուի ամուրի հիմերու վրայ, հետեւաբար այդ մասին որեւէ հարցադրում կամ կասկած անհիմն է:

Հայաստանի վարչապետին կողմէ կատարուած յայտարարութիւններուն առընթեր ուսական կողմն ալ «շօշափելի» հասկացողութիւն ցուցաբերեց ու մեր մտքերուն մէջ է տակաւին, որ հայաստանեան դէպքերու օրերուն ծանր հարցադրումներ եւ նոյնիսկ մեղադրական ոճով յղուածներ հրապարակող եւ «գրէմլի բանբերը» համարուող պարբերականները կտրուկ կերպով փոխեցին իրենց ոճը եւ հարցերը սկսան քննարկել ու ներկայացնել բոլորովին այլ ոճով մը:

Այս բոլորին առընթեր վարչապետ Փաշինեան «ճարպիկ» քայլով մը եւ փորձելով ալ աւելի ամրագրել Երեւան-Մոսկուա շարժերու թիւնները հազարաւորներու առջեւ (17 Օգոստոս) յայտարարեց, որ պիտի իրականացուի հայ-ուսական համատեղ նախաձեռնութիւն մը, որուն կիզակէտը սուրիան է, հետեւաբար նաեւ սուրիահայերու անվտանգութիւնն ու անոնց հանդէպ ՀՀ իշխանութիւններու կողմէ «համատեղ» ժեսթի արտայայտութիւնը պիտի ըլլայ:

Վարչապետը առաջին օրերուն փակագծերը չէր բանար, ու այդ յայտարարութիւնէն շաբաթներ անց յստակ կը դառնար, որ խօսքը հայկական բանակի սակրաւորներու եւ բժիշկներու Սուրիա ուղղարկելու մասին է:

Այս ծրագիրը անշուշտ արժանի կ'ըլլար տարբեր մակարդակի քննարկումներու ու լսելի կ'ըլլային տարբեր մակարդակի դժգոհութիւններ, որոնց հիմքը նման նախաձեռնութեան մը Հայաստանի անվտանգութեան բերելիք վնասներու հաւանականութեան մտավախութիւնն էր:

Այս բոլորը հաշուի առնելէ ետք արդէն յստակ սկսած է դառնալ, որ այսօր Մոսկուա-Երեւան

շարժերու թիւնները վերագտած են երբեմնի «անդորր»ը ու շատ հաւանական է, որ ուսական կողմը քանի մը «կարմիր գիծերու» յստակացումէն ետք սկսած է փաշինեանին նայել, որպէս վստահելի ու ներկայ պահուստ անփոխարինելի գործընկեր մը:

Ինչ կը վերաբերի ամերիկեան կողմին ապա Փաշինեանի համար այդ գերտէրութիւնէն ակնկալիքները կը շարունակեն մնալ ստուերի մէջ: Այն իմաստով, որ Փաշինեանի վերջին ԱՄՆ տուած այցելութեան օրերուն «Չուր կը դառնային» բոլոր խօսակցութիւնները, որոնց հիմամբ ԱՄՆ նախագահ Տանըլտ Թրամը Սպիտակ Տան մէջ պիտի ընդունէր Փաշինեանը, այդպիսով կտրուկ վերջին տարիներուն հաստատուած եւ կարծրատիպ դարձած ամերիկեան կողմին անտարբերութեան «սառույցը»:

Սակայն այդպէս չէր ըլլար ու Փաշինեան իր նախորդին՝ Սերժ Սարգսեանի նման կը գոհանար



մասնակցիլ Նիւ Եորք այցելող երկիրներու ղեկավարներուն ի պատիւ Թրամի կողմէ տրուած պաշտօնական ընթրիքին:

Ճոն Պոլթոնի «յայտնուիլը»

Ամերիկեան արտաքին քաղաքականութեան հետեւողները լաւապէս կ'ըմբռնեն, թէ ինչ պայմաններու եւ անորոշութեան մէջ Թրամը

ձոն Պոլթոնը կը նշանակէր ԱՄՆ ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական:

Խաղաքարտերը ցրուելու ժամանակն էր եւ Իրանի, Իրաքի ու մասնաւորապէս Սուրիոյ մէջ «յստակացած» պատկերէն ետք, ԱՄՆ կարիքն ունէր նոր խաղաոճի

Շար.ը էջ 18

Coping with Illness

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ Հ.Ս.Ս.-Ի ՏԻԿԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՍԱՐՄՆԻ ԿՈՂՄԷ ԴԱՍԱԽՕՍ

Seta Haig L.M.F.T. & Adrine Avetyan L.M.F.T.

ԻՆՉՊԵՍ ԴԻՍԱԳՐԱԲԵԼ ԳՐՈՆԻԿ ՀԻՄՆԴՈՒԹԵԻՆՆԵՐԸ ԵՒ ՍԱՔԱՌԻԼ ԱՆՈՆՑ ԴԷՍ ՆԱԵՒ՝

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՈՒԻԼ ՈՒ ՆԵՑՈՒԿ ԿԱՆԳՆԻԼ ՍԻՐԵԼԻԻ ՍԸ ՀԵՏ ԱՆՈՐ ԱԲԵՐԻՉ ՀԻՄՆԴՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՍԵՂԱ ՆԱԵՒ ՊԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԷ ՁԵՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՑ ՀԻՆԳՈՒԹԻ 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2018-ԻՆ, ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:00-ԻՆ, ԿԼԵՆՏԵՑԼԻ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՍԷՁ.

THURSDAY
Oct 25, 2018

7:30 To 10pm
Վայր՝

Glendale Central Library

222 East Harvard St.
Glendale CA 91205

Հարցումների համար
զանգել
Karine:
818.324.0574
For questions please call
Karine:
818.324.0574
Free Admission

Sponsored by:

HMM
Ladies
Auxiliary







Որո՞նք են Ֆրանկոֆոնիայի Գազաթնաժողովի Հիմնական Արդիւնքները



ՆԱՐԵԿ ՄԻՆԱՍԵԱՆ

Հայաստանում կայացաւ երկրի անկախացումից ի վեր ամենամասշտաբային միջազգային իրադարձութիւնը՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպութեան 17-րդ գագաթնաժողովը, որի շրջանակներում Հայաստանը երկու տարով ստանձնեց այդ կառուցի նախագահութիւնը: Նման միջոցառման կազմակերպումն, անշուշտ, պահանջել է թէ՛ դիւանագիտական, թէ՛ կազմակերպչական հսկայական ջանքեր: Այժմ, երբ գագաթնաժողովը բարեյաջող կերպով աւարտուել է, ցանկալի է յետադարձ հայեացք գցել եւ գնահատել ի՞նչ տուեց այն Հայաստանին:

Արդիւնքներն ամփոփելիս նախեւառաջ անհրաժեշտ է արձանագրել, որ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպութեան գագաթնաժողովի նախագահութիւնը (ՖՄԿ) մի երկրից միւսին չի փոխանցում ռոտացիոն կարգով, ինչպէս ընդունուած է մի շարք այլ կառուցներում (օրինակ՝ ՇՀԿ, ԵՄ, ԵԱՏՄ): Կառուցի նախագահութեան ստանձնումը հայկական կողմի նախաձեռնողականութեան եւ ակտիւ աշխատանքի արդիւնք է, ինչը պէտք է գնահատել ըստ արժանուոյն:

Միջազգային Կապերի Ամրապնդում

Բաւական բարձր մակարդակի կազմակերպուած նման լայնամասշտաբ միջոցառման հիւրընկալումն, անշուշտ, դրական է ազդել Հայաստանի միջազգային հեղինակութեան վրայ: Հայաստան էր ժամանել 84 երկրի պատուիրակութիւն, ընդ որում՝ նրանցից 38-ը ներկայացուած էր երկրի ղեկավարի մակարդակով: Նման ներկա-

Շար.ը էջ 19

Եթէ Ամեն Հայ Մի Քիչ Ազնաւոր Լինէր



ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Վերոյիշեալ խորագիրը առնուած է Ազնաւորի յուղարկաւորութեան տեսաերիզին տակ դրուած բազմաթիւ մեկնաբանութիւններէն, որ աշխարհասփիւռ հայեր կատարած են՝ անոր կորուստը սգալով եւ իր արժէքը փառաբանելով: Հետեւեալ տողերուն մէջ կ'ուզեմ տալ մաս մը այդ մեկնաբանութիւններէն, որ լաւապէս կը ներկայացնէ հայու երախտապարտութիւնը անձի մը հանդէպ, որ ամբողջ աշխարհին կողմէ ճանչցուեցաւ որպէս հայօրէն տրոփող սիրտը ֆրանսացիին. «Եթէ բոլոր յայտնի սփիւռքի եւ Հայաստանի հանրաճանաչ եւ հռչակաւոր հայերը լինէին ինչպէս Մեծն Շարլը, Հայաստանը կը լինէր աշխարհի ամենացանկալի եւ հարուստ երկիրը»:

«Ծնողներիս հպարտութիւնը, իմ հպարտութիւնը, զաւակներիս հպարտութիւնը, մեր հպարտութիւնը: Դու անմահ ես մեր սրտերուն, մեր հոգիներուն, մեր արեան մէջ... Քո անունը մեր պարծանքն է ողջ աշխարհում»:

«Հպարտութիւնից արիւնս երակներուս մէջ սառչում է: Ծնկի եմ իջնում յիշատակիդ առջեւ, Մեծ ՀԱՅ»:

«ԱԶԳԻՍ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ... Աստուած հոգիդ լուսաւորի... որ հայ ծնունդից, հայ ապրեցիր եւ հայ գնացիր... գնացիր, այո, որովհետեւ հերոսները չեն մեռնում... ափսոսում եմ կորուստդ, Մեծ մարդ, որ հողիցդ այսքան հեռու, բայց սուրբ հողիդ ուժը արեանդ մէջ՝ ազգիդ արժանի զաւակ ապրեցիր, որ հայ կոչումը բարձր պահեցիր... երանի իւրաքանչիւր հայ քեզ պէս հայ ապրէր, հենց քեզ պէս...»:

«Հոգեհանգիստի արարողութիւնով անգամ շատ աւելի բան արեց հայի համար քան որոշ կեն-

դանի անձիք... յաւերժ փառք քեզ, մեծ հայ»:

Շարլ Ազնաւորի պաշտօնական յուղարկաւորութիւնը Ֆրանսիայի կատարեց երախտագիտութեան անսահման զգացումներով՝ անոր տալով մեծահռչակ Cour des Invalides կոչուող զինուորական յայտնի պանթէոնի Cour d'Honneur բակին մէջ մեծարուելու յարգանքն ու պատիւը, ճիշդ հոն, ուր կը ննջէր Ֆրանսայի արքաներու արքան՝ Նափոլէոն Պոնափարթը: Շարլ Ազնաւորի Ֆրանսայի դրօշով փաթեթուած դագաղը, ետեւէն ալ Հայաստանի դրօշին գոյներով պատրաստուած ծաղկեպսակը, զինուորական ջոկատի մը ուսերուն վրայ հանգած եւ բեռեցուած՝ դրուեցաւ այդ հռչակաւոր բակին ճիշդ կեդրոնը, որուն առջեւ խոնարհեցան Ֆրանսայի եւ Հայաստանի պետական ամենաբարձր ներկայացուցիչները: Նախագահներ Մաքրոն, Հոլանտ, Սարքոզի եւ Արմէն Սարգսեան ու վարչապետ Նիկոլ Փաշինեան Ազնաւորի դագաղին առջեւ կնքեցին դաշինք հայ-ֆրանսական եղբայրակցութեան եւ սերտ գործակցութեան՝ ի յարգանք այն Մեծին, որ եղաւ ֆրանսահայ դեսպանը հայ ազգին՝ աշխարհի ամբողջ տարածքին:

Քսաներորդ դարու լաւագոյն երգիչ հռչակուած Ազնաւորը իր հայ-ֆրանսական միջպետական յարաբերութիւններուն բերած նպաստով՝ Հայոց Յեղափոխութեան դատը Ֆրանսայի մէջ դրաւ պետական ամենակարեւոր նկատառութիւններու ցանկին վրայ: Նախագահ Մաքրոնի խօսքով՝ «Ազնաւոր Հայաստանի զաւակն էր, բարեկամը, դեսպանը, նաեւ այն առատաձեռն զաւակը, որ օգնութեան ձեռք երկարեց 1988-ի երկրաշարժէն տու-

Շար.ը էջ 18

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY




Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

(818) 500 9585
(818) 269 0909

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

Արժանավայել Շուքով Նշուեցաւ Հաճոյ Հերոսամարտի 98-րդ Տարեդարձը

Անցեալ Կիրակի, Հոկտեմբեր 14, 2018 չիշատակելի օր մը հանդիսացաւ Լոս Անճելոսի եւ շրջակայքի հայութեան համար: Արդարեւ խուռներամ բազմութիւն մը փութացած էր Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, ուր հանդիսաւոր պատարագով, հոգեհանգստեան եւ մատաղի օրհնութեան արարողութեամբ նշուեցաւ Հաճոյ գոյամարտի 98րդ տարեդարձը: Օրուան պատարագիչ Արժ. Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեան, իր քարոզին մէջ ոգեկոչեց չիշատակը Հաճոյ հերոսանքները:



Պատարագէն ետք եկեղեցուց կից «Կիրակոս» սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ-սեղան ճաշկերոյթ: Գլխաւոր ուսեստն էր աւանդական հարիսան, զոր պատրաստուած էր Հաճոյ Հայրենակցական Միութեան Տիկնաց Օժանդակ Մարմնի եւ տասնեակ մը կամաւոր երիտասարդներու կողմէ:

Ճաշկերոյթին ներկայ էին Գալիֆորնիոյ տարբեր շրջաններէն ժամանած բազմահարիւր հաճոյ-

էր ծանօթ գրագէտ եւ վերջերս լոյս ընծայած «Հաճոյ Միւրուն» վէպի հեղինակ՝ Սարգիս Վահագն: Ան անդրադառնալէ ետք Հաճոյ ինքնապաշտպանութեան եւ կամաւորներու հերոսական պայքարին՝ ըսաւ. «... Մենք ալ իրաւունք ունինք եւ պէտք է որ հպարտ ըլլանք մեր հաճոյցիութեամբ, որովհետեւ մեր սէզ լեռնաշխարհի կերտուածքը, մեզ տարբեր խոյացումներով օժտած ըլլալով, ենթարկած է մեզ չարքաշ բայց ստեղծագործ կեանքի, ֆիզիքականին հետ նաեւ կոփելով նաեւ մեր հոգեկան ամրակուռ կառուցը, հիմնուած՝ անսակարկ



ցիներ եւ համակիրներ ինչպէս նաեւ քաղաքական եւ հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Օրուան հանիսավար՝ Տօթթ. Տիրան ձէրէճեան, սրտի ջերմ խօսքերով ողջունեց ներկայ հասարակութիւնը, որ եկած էր յարգելու մեր անմեռ նահատակներու չիշատակը: Ապա ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուռութեամբ արժեւորեցին չիշատակը մեր քաջամարտիկներուն: Մատաղի եւ սեղաններու օրհնութիւնը կատարեց Արժ. Տ. Տաթեւ Ա. Քհնյ. Թաթուլեան:

Գալիֆորնիոյ Հաճոյ Հայրենակցական Միութեան ժրջանատեսակետ Զաւէն Քէօզկերեան, իր բացման խօսքին մէջ, շնորհակալութիւն յայտնեց ներկայ հոգեւորականներուն եւ հասարակութեան: Անոնք եկած էին հաղորդուելու չիշատակով մեր քաջարի հերոսներուն եւ ազատատենչ հաճոյցիներուն, որոնք իրենց սիրունքներով եւ քաջարի գոյապայքարով օրինակ հանդիսացան բոլորին:

Օրուան գլխաւոր բանախօսն

հայրենասիրութեան, ազատ ապրելու անկապտելի վճռականութեան եւ պատիւի պաշտպանութեան սրբազան կռուաններու վրայ»: Իր խօսքի աւարտին չիշեց անուանի հաճոյցիներու անունները, որոնք պատին կը բերեն մեր ազգին եւ յարեց «... Անոնք ինկան որպէսզի վերածննդի ու ապրի հայն ու հաճոյցին»:

Գեղարուեստական բարձրորակ յայտագրին մաս կազմեցին գաղութիս անձնօթ եւ հանրայայտ, ասմունքող Թագուհի Արզումանեան եւ ազգարական ու հայրենասիրական երգերու տաղանդաւոր մեկնաբան՝ Գագիկ Պատալեան:

Պատ. Այո՛, ես կատարել եմ մասնագէտի եւ քաղաքացու իմ պարտքը: Իսկ հիմա այդ խնդիրներով զբաղուած եմ ի պաշտօնէ: Մեր յոյժ կարեւոր անելիքներից են հայերէնի պահպանումը եւ տարածումը հայրենիքից դուրս ապրող հայերի շրջանում, հայերէնի ուղղագրութեան հարցը եւ այլն: Դրանք աւելի յստակ կը դառնան լեզուաքաղաքականութեան պետական ծրագրի մշակումից եւ ընդունումից յետոյ:

Հարցազրույցը վարեց՝ ՊԱՊԻՆ ՄՈՒՐԱԴԵԱՆ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel:----- Email:-----

Հաճոյ Դիւցազնամարտի 98-ամեակը

ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳՆ

Մերելի հայրենակիցներ, Պահ մը, փոխ առնելով անմահն Պարոյր Մեակի հաստատումը, կրնանք մենք ալ առանց վարանումի կրկնել՝

«Մենք մեզ ոչ ոքից չենք գերադասում, պարզապէս մեզ հաճոցի են ասում», քանի որ հանրայայտ ճշմարտութիւն է, թէ «Հաճոցի եւ հետեւաբար հաճոցիներուն նախընտրան պաշխօ է:» Այսինքն՝ կերտուած քն ու բնաւորութիւնը տարբեր է: Ազնուական ու քաջ:

Ճիշդ այդպէ՛ս, մենք ալ իրաւունք ունինք եւ պէտք է հպարտ ըլլանք մեր հաճոցիութեամբ, որովհետեւ մեր սէզ լեռնաշխարհի կերտուած քը, մեզ տարբեր խոյսացումներով օժտած ըլլալով, ենթարկած է մեզ շարքաշ բայց ստեղծագործ կեանքի, ֆիզիքականին հետ կոփելով նաեւ մեր հոգեկան ամրակուռ կառուցը, հիմնուած՝ անսակարկ հայրենասիրութեան, ազատ ապրելու անկապտելի վճռականութեան եւ պատիւի պաշտպանութեան սրբազան կուռններուն վրայ: Առաքինութիւններ՝ որոնց պաշտպանութեան ի խնդիր, հաճոցին միշտ ցուցաբերած է քաջակորով ընդվզում եւ միահամուռ ու խիզախ ծառայում, ընդդէմ մեմլուք, թուրք եւ թուրքմէն ոտնձգութիւններուն: Այս խոյսնք մեզի արդարօրէն իրաւունք կու տայ մեր կուրծքերը հպարտութեամբ զարդարելու:

Թէեւ մեր դիւցազնամարտը մեզի պարտադրուեցաւ շատ աւելի վատթար ու աննպաստ պայմաններու տակ, խիտ պաշարուածին հետեւանքով, գէնքի, ռազմանիւթի եւ անդամ թերքի ահաւոր սակաւութեամբ: Եւ սակայն հակառակ այս բոլոր խոչընդոտներուն, մեր պապերն ու հայրերը յաջողեցան շատ աւելի երկար, լրիւ ու թրամիսներու տեւողութեամբ կասեցնել թշնամին:

Հաճոցի եղբրական անկումն ալ եղաւ շատ մը ուրիշ քաղաքներու վիճակուած ճակատագիրէն բոլորովին տարբեր: Օրինակ, Վանի քաջարի ըմբոստութիւնը կը փրկուէր ռուսական բանակներու փութացող օգնութեան շնորհ: Նմանապէս, Մուսա Լեռանն ալ՝ ֆրանսական նաւատորմին ընձեռած աջակցութեամբ եւ տեղափոխութեամբ դէպի ապահով Եփպոս: Զէթիւնի առաջին ապստամբութիւնն իսկ, ունեցաւ գործնական նեցուկն ու միջամտութիւնը Եւրոպական մեծ պետութիւններուն:

Այս բոլոր օգնութեան լծակներէն ոչ մէկը ունեցաւ Հաճընը: Հաճընը մնաց առանձին, լքուած, խաբուած ու ամէն կողմէ պաշարուած՝ տասնեակ հազարներով կանոնաւոր, լաւապէս զինուած քեմալական զօրքերով եւ կողոպուտի տենչահար ամբոխ խուժանով: Անոր նոյնիսկ զլացուեցաւ դուրսի հաճընցիներուն:

Ատանայի մէջ կազմած գիւնուորական կամաւոր գունդերուն դէպի Հաճըն մուտքը, ֆրանսական նենգաբարոյ իշխանութեանց կողմէ արգելուելով եւ ապա վերջնականապէս ցրուելով:

Պատմութիւնը այսօր ամբողջութեամբ բացայայտած է դաշնակից ուժերուն, անգլիոց եւ Ֆրանսայի սարքած խարդախանքները Հաճընի եւ Կիլիկիոյ հայերուն հանդէպ, ոտնատակ ընելով, նախապէս բազմիցս իրենց իսկ տուած

լորձնաշուրթն օգնութեան խոստումները: Անոնք արհամարհական քրքիջով մոռցան Արարայի հերոսական ճակատամարտին հայ տղոց բերած վճռորոշ մասնակցութիւնն ու գոհաբերութիւնները եւ գացին թուրքին գարշապարը լիզելու, ի գին առեւտուրի քանի մը մենաշնորհ աւելի կորզելու ակնկալութեամբ:

Ճիշդ է, բռնագողթի, կոտորածի, սուզի, աւերումի այդ ահաւոր օրերուն, երբ համատարած յոսահատութեան, ողբասացութեան եւ համակերպումին դէմ, ընտրեալ քիչերն է որ ընդվզած ոտքի ելան, զէն ի ձեռին պաշպանելու համար իրենց արժանապատուութիւնն ու պատիւը:

Այդ քիչերուն մէջ, Հաճընը կը գրաւէ սիրալի տեղ, ցուցաբերած իր խիզախութեամբ, քաջութեամբ եւ հնարամտութիւններով, որոնց շնորհիւ ան յաջողեցաւ նոյնիսկ լնտփանցել թրքական բանակի թիկունքէն ներս եւ բռնագրաւել դժոխային մահասփիւռ թնդանօթը եւ Հաճըն փոխադրել գայն:


Ուրիշ հիմնական սխրանք մըն էր մանաւանդ, 1920 թուի Մարտ ամիսէն սկսեալ մինչեւ տիրահոչակ Հոկտեմբեր 15-ը, ութ տաժանելի ամիսներ, յաղթական մեր հերոս զինեալները անսահման նուիրո՞մով եւ գոհողութեամբ դիմադրեցին թշնամիին, հակառակ արդէն սաստկացող սովին ու համաճառակներուն, եւ մանաւանդ ռազմամթերքի ահաւոր չզոյլութեամբ, մերժելով մերժեցին հաւատ ընծայել, զէնքերը թշնամիին յանձնելով, կեանքերնին ապահովելու թշնամիին տուած ստապատիր խոստումներուն: Այլ, նախընտրեցին մահ իմացեալը քան ստրկութիւնը: Այլ ընտրանք չունենալով, անոնցմէ շատեր, որոնք չկրցան պաշարուէն դուրս ելլել պաշարումը ճեղքող 600 հոգինոց խումբին հետ, քաջաբար ընտրեցին անձնասպանութիւնը: Իսկ մնացեալ անձար ժողովուրդը գոհ գնաց սպանդին եւ առեւանգումին:

«Անոնք մեռան, բայց չկորան» ինչպէս հուշակեց բանաստեղծը: Անոնց սխրանքը մեր ողբաձայն երգերուն քով հնչեցուց քաջութեան եւ ինքնանուիրումի հիասքանչ հպարտանքը: Անոնք, վերապրողներուն եւ յաջորդ սերունդներուն կտակեցին սրբազան պատգամը՝ ապրելու, ստեղծագործելու եւ ուրճանալով ազգին վերածնունդը կերտելու:

Արդարեւ, մնացորդաց հաճընցի ազգովին ապրեցաւ, ուրճացաւ ու կերտեց գեղածիծաղ Նոր Հաճըն աւանը մայր Հայաստանի հողին վրայ եւ հոն կանգնեցուց մեր հերոս նահատակներուն արժանավայել յուշակոթողը, ուր երախտագին հպարտութեամբ այցի կ'երթայ Հայաստան գացող ամէն հաճընցի, եւ ինչո՞ւ չէ ամէն հայ:

Սփիւռքի Հաճընցինն ալ անմաս չի մնաց սխրանքէ: Ան ալ Պէյրութի մէջ, հիմնեց Նոր Հաճըն թաղամասը որ դարձաւ հայրենասիրութեան միջնաբերդը եւ իր Սուրբ Գէորդ եկեղեցիով եւ կրթական Սահակեան բարձրագոյն վարժարանով, Կերթմէնեան եւ Տատուրեան դպրոցներով լոյս ու գիտութիւն ջամբեց նոր սերունդներուն:

Իսկ հաճոցի երիտասարդութիւնը չի մնաց մեկուսացած իր կեղեւին մէջ: Ան, աշխարհի մեծա-



զոյն պետութիւններէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներուն տուած մեծ դիւանագէտ Եղուարտ ձէրէճեանը, իսկ Ֆրանսայի նշանաւոր նախագահ Միթլըրանն ալ՝ որպէս իրեն քաղաքա-շխարհագրական խորհրդանու ընտրեց հմուտ քաղաքագէտ Ժեռար Չալեանը:

Երիտասարդ քաղաքագէտ եւ պատմաբան տղթ. Եղիկ ձէրէճեան, տասնութ տարիներ Պէյրութի հայութիւնը ներկայցնելով չորս անգամ ընտրուեցաւ Լիբանանի խորհրդարանին երեսփոխան եւ մեծապէս սատարեց նորանկախ Հայաստանի եւ Լիբանանի հանրապետութիւններուն միջեւ բարեկամական կապերու հաստատման եւ ամրապնդման:

Այլ մարզի մէջ ալ, վերջերս, հաճոցիի գաւազ, կենսաբան տղթ-թոր փրոֆեսէօր Արտեմ Փաթափութեան, որպէս իսկական անդամ ընտրուեցաւ Ամերիկայի Գիտութեանց պատկառելի Ակադեմիային, եւ ապա Երեւանի Համալսարանին ստացած հրաւերով, զնաց Երեւան եւ իր գիտական միջազգային հուշակ ունեցած գիւտարարութեան բաժնեկից դարձուց հայոց համալսարանն ալ:

Տակաւին երկար է շարքը

ազգին եւ մարդկութեան ծառայող հաճոցի բժիշկներուն, տղթթորներ Քէքլիկեանով, Դագեանով Քրքեաշարեանով, ինչպէս նաեւ՝ դեղագործներ՝ հայր ու որդի Կիւլվարդեաններով եւ տղթ. Տիրան ձէրէճեանով: Տակաւին, շարունակելով երկար շարքը, թուենք բազում իրաւաբաններ, ճարտարապետ-երկրաչափներ, չմոռնալով կարեւոր ներդրումները մտաւորականներուն, որոնցմէ մանաւանդ Յարութիւն Կուժուհին, որմէ խորհուրդ հայցելու կու գար Լիբանանի նշանաւոր ղեկավար Քամալ պէյ ձումպլաթը: Նշենք վերջապէս, դաստիարակներուն եւ մանաւանդ ձեռներէց առեւտրականներուն ներդրումները, որոնք փայլ տուին հաճընցիականութեան:

Նահատակներուն պատգամը արդէն գործադրուած է: Ու տակաւին պիտի շարունակուի մեր յաղթերը դէպի նորանոր նուաճումներ: Ու մենք եւ գալիք մեր սերունդները, միշտ խիտ շարքերով, պիտի շարունակենք գալ եւ մեր յարգանքի հոգետուրքը մատուցանել նահատակներու սրբացած յիշատակին:

Անոնք ինկան՝ որպէսզի վերածնի ու ապրի հայն ու հաճոցին:

St. Gregory's 2nd Annual Kef Time

Big Band Swing & Jazz Night


Introducing The Eric Extrand Ensemble (10 Piece Band) At Geragos Hall

Saturday Oct 20, 2018
7pm Social Hour/8pm Dinner
2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107
Dinner and Open Cash Bar

Reservations with Payment are a Must. No Tickets Sold at the Door
Deadline Oct 15, 2018

For Reservations Please Call Church Office: 626-449-1523

Donation \$60



Պոլսոյ Շիշլի Շրջանի Փողոցներէն Սէկը Կը Կոչուի Հրանդ Տինքի Անունով

Պոլսոյ քաղաքապետարանի աւագանիի նիստին որոշուած է հաշուի առնել բնակչութենէն ստացած բողոքներն ու առաջարկները եւ վերանուանել Պոլսոյ շարք մը փողոցներ:

Պոլսոյ մէջ հրատարակուող «Ակօս» թերթի հիմնադիր խմբագրապետ Հրանդ Տինքի պատուին փողոց մը անուանակոչուած է Պոլսոյ Շիշլի շրջանին մէջ: Մեղրու-թիլէթ թաղամասի ներկայ Սամանէոլու փողոցը այսուհետեւ պիտի կոչուի Հրանդ Տինքի փողոց:

Յիշեցնենք, որ Տինքը սպաննուած էր 2007-ին թուրք ազգայնական Օկիւն Սամսուրի կողմէ՝ «Ակօս»-ի խմբագրատան դիմաց: Նշենք, որ Պոլսոյ փողոցներէն մէկն ալ անուանակոչուած է թրքական գրականութեան նշանաւոր դէմքերէն մէկուն՝ Եաշար Քեմալի պատուին: Քիւրտ Եաշար Քեմալը մեծցած է վանի մէջ: Անոր ջանքերով էր, որ 1950-ականներուն կանխուեցաւ վանի Աղթամար կղզիի Սուրբ Խաչ հայկական եկեղեցւոյ աւերումը:

Աւստրալահայ Ընտանիքը Հայրենիքի Սէջ Հաստատուելու Նպատակով Ժամանած է Հայաստան



«Զուարթնոց» օդակայան, 10 Հոկտեմբերին, ժամանած է աւստրալահայ Արա Աղաճանեանի եւ Մարինա Օգանէսեանի ընտանիքը, իրենց երկու երեխաներուն հետ: Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնբրես»-ը, սփիւռքահայ ընտանիքը որոշած է գալ Հայաստան՝ երկրի մէջ հաստատուելու նպատակով: Անոնք արդէն տուն գնած են Երեւանի մէջ, իսկ 13 տարեկան Գայրիանն էլ եւ 10 տարեկան Արսէնը պիտի սորվին «Ալք» դպրոցին մէջ:

«Շատ ուրախ ենք, երկար ժամանակ է կը սպասէինք այս օրուան: Մենք երկար ժամանակ կը մտածէինք գալ Հայաստան եւ, հնարաւոր է, որ Հայաստանի մէջ տեղի ունեցած չեղափոխութիւնը վերջին կէտն էր մտածելու՝ ալ ինչի կը սպասէինք», - ըսած է Արա Աղաճանեանը:

Հարցին՝ կան արդեօք մտավախութիւններ, որ Հայաստանի մէջ կրնան դժուարութիւններու հանդիպիլ, Մարինա Օգանէսեանը պատասխանած է, որ կան, իհարկէ, մտավախութիւններ, սակայն յոյս

ունին, որ կը կարողանան յաղթահարել:

«Վերջին փոփոխութիւններէն ետք կը մտածենք, որ պիտի կարենանք աւելի հեշտ հաստատուիլ եւ յոյս ունինք, որ երեխաները իրենց ապագան այստեղ կրնան տեսնել», - նշած է Մարինա Օգանէսեանը: Անոր խօսքով՝ Աւստրալիոյ մէջ կան ընտանիքներ, որոնք կը հետեւին իրենց, եւ եթէ իրենք կարենան յաջողութիւն ունենալ, անոնք նոյնպէս պիտի գան:

Խօսելով ապագայ ծրագիրներուն մասին՝ Աղաճանեանն ըսած է, որ կը մտածէ գործ սկսիլ տեղեկատուական թեխնոլոգիաներու ոլորտին մէջ:

«Առաջին քանի մը շաբաթը պիտի լուծենք երեխաներուն դպրոց տեղաւորելու խնդիրը, եւ անկէ ետք տեղեկատուական թեխնոլոգիաներու ոլորտին մէջ պիտի փորձենք իրականացնել մեր ծրագիրները», - ըսած է Աղաճանեանը:

Աղաճանեանը կը ցանկանայ, որ իր երեխաները մեծնան Հայաստանի մէջ, որովհետեւ կը կարծէ, որ այստեղ աւելի ապահով է:

Մուսայ Լեռան Հերոսամարտի 103-րդ Ամեակին Նուիրուած Միջոցառում՝ Յունաստանում



Հոկտեմբերի 7-ին Աթէնքում էՌԱՅ միութեան նախաձեռնութեամբ եւ «Հայաստան» հասարակական մշակութային կենտրոնի աջակցութեամբ հին հայկական Դուրդութի թաղամասում նշուեց Մուսայ Լեռան հերոսամարտի 103-րդ տարեդարձը:

Աթէնքահայերի խանդավառ մասնակցութեամբ միջոցառմանը, որին ներկայ էին ՄԳՀԿ եւ ՌԱԿ կուսակցութիւնների եւ Հայ Առաքելական եկեղեցու Յունահայ թեմի ներկայացուցիչները եւ յոյն գրող Պանդելի Արապինիսը ողջունվեց Եվրոպայի Հայերի Հա-

մագումարի կողմից: Հանդիսութեանը հնչեց կենդանի երաժշտութիւն: Սայաթ Նովայի ստեղծագործութիւններից կատարեց համալսքում ճանաչուած քանոնահարուհի Սուսաննայ Սարդարեանը եւ Մանուրեանի ստեղծագործութիւններից ներկայացրեց դաշնակահարուհի Շահանէ Օհանեանը:

Հայ փոքրիկները հանդէս եկան օրուայ պատգամը յուշող հայրենասիրական բանաստեղծութիւններով: Հիւրերին մատուցուեց աւանդական հարիսան: Միջոցառումը շարունակուեց Քոչարի եւ այլ հայկական աւանդական պարերով:

Պոլսահայ Համայնքը Յաջողած է Պետութենէն Ետ Ստանալ Անցեալին Խլուած Խոշոր Հողատարածք



Պոլսոյ հայկական Երեք Խորան եկեղեցւոյ հիմնադրամի նախագահ Պօղոս Թանաճըօղլուն յայտնած է՝ անցեալին հիմնադրամէն խլուած հողատարածքի վերադարձի մասին:

Թրքական «Ogunhaber» կայքի փոխանցմամբ՝ Երեք Խորան եկեղեցւոյ հիմնադրամի նախագահ Պօղոս Թանաճըօղլուն նշած է, որ իրենք, օգտուելով հիմնադրամներու օրէնքի 11րդ կէտի հնարաւո-

րութենէն, դատարան դիմած էին՝ Պեշիքթաշի շրջանը գտնուող խոշոր հողատարածքը ետ ստանալու պահանջով:

«Երկարատեւ իրաւական պայքարէ ետք յաջողեցանք ետ ստանալ այդ հողատարածքի վաւերութուղթը: Շնորհակալութիւն կը յայտնենք նախագահին մեզի աջակցելու համար», - նշած է Պօղոս Թանաճըօղլուն:

Ձեր Ձգեստապահարանին Մեջ Ո՞ր Երանգները Պետք է Գերակշռեն Այս Աշնան

Ձեռքերը եւ ոճերը միակը չեն որոնց պէտք է հետեւիլ: Գունային երանգները բեմահարթակներու վրայ կը փոփոխուին իւրաքանչիւր եղանակի. հնարաւոր է, որ տարբեր գոյներ միշտ կը մնան, իսկ որոշ գոյներ նորաձեւութիւն կը վերադառնան կրկին:

Ո՞ր գոյները նորաձեւ են այս աշնան եւ որո՞նց պէտք է ուշադրութիւն դարձնել:

- Թաց ասֆալթի գոյն: Մոխրագոյնը դասական գոյն է, որ պէտք է ըլլայ իւրաքանչիւր կնոջ զգեստապահարանին մէջ: Կը թուի, թէ անիկա տխուր է, բայց իրականութեան մէջ մոխրագոյն իրերը կը դիտուին ուժեղ եւ համընդհանուր: Ասիկա կը հաստատեն նաեւ նորաձեւութեան տուները՝ իրենց ներկայ հաւաքածոներուն մէջ ներառելով մոխրագոյնի երանգներու հագուստներ:

Բեմահարթակներու վրայ կը յայտնուին նաեւ մետաղական գոյնի զգեստներ, որոնք նոյնպէս արդիական են այս եղանակին:

- Գինիի գոյն: Այս եղանակին ձեւաւորողները խորհուրդ կու տան քիչ մը խամրեցնել ներկայակալը եւ հագուստի համար ընտրել մօրիի եւ բայի երանգները: Թէեւ բեմահարթակներու վրայ կը յայտնուին ամենատարբեր երանգներ՝ վառ բալագոյնէն մինչեւ գինիի, լայն գունային փաթեթը թոյլ կու տայ ընտրել այն երանգը, որ կատարեալ պիտի համապատասխանէ ձեզի:

Բայի գոյնը կրնայ թարմացնել ձեր դէմքին գոյնը, իսկ գինիինը՝ ընդգծել աչքերուն գոյնը:

- Դեղին: Դեղինը դարձած է այն գոյնը, որոնք երեւցած են ցուցադրութիւններու ժամանակ: Անոր երանգները՝ սկսեալ կիտրոնագոյնէն մինչեւ յազնու գեղինն ու մանանեխի երանգը, նուաճած են նորաձեւութեան տուներու ցուցադրութիւններու մեծամասնութիւնը: Առաւել արդիական դարձած է այս գոյնի օգտագործումը հագուստը զարդարող մանրուքներու մէջ:

րու մէջ: - Աւագագոյն: Ասիկա նոյնպէս այն տարածուած գոյնն է, որուն ձեւաւորողները կը վերադառնան գրեթէ իւրաքանչիւր եղանակի: Գաղտնիքը շատ պարզ է. այս երանգը կը վայելէ գրեթէ բոլոր կիներուն՝ անկախ գունային տեսակէն ու մաշկէն:

Յատկապէս տարածուած է աւագագոյն արտահագուստը: Ի դէպ, եթէ դուք մութ գոյնի մագեր ունիք, ուստի անպայման ուշադրութիւն դարձուցէք այս գոյնին, որովհետեւ անիկա կ'ընդգծէ ձեր մագերուն երանգը:

Ձեր մագերուն երանգը: - Զինուորական կանաչ: Այս գոյնը արդէն շատոնց չի նոյնանար ռազմական կամ սաֆարի ոճին հետ: 2018-2019 աշուն-ձմեռ եղանակին՝ այս գոյնը չի կորսնցներ իր արդիականութիւնը եւ պարբերաբար հաւաքածոներու մէջ կ'օգտագործուի իբրեւ հիմնական երանգ:

Ընտրել գինուորական կանաչը ըստ ձեր մաշկի երանգին՝ բաւական դիւրին է: Եթէ ձեր մաշկը ունի բաց երանգ, ուստի նպատակաշարժար է, որ ընտրէք խամրած, գինուորական կանաչի պարզ գոյնը: Եթէ ունիք մաշկի վառ երանգ, ուստի ձեզի պէտք է յազնուցած երանգաւորում՝ մանանեխադեղնագոյնին անցնող:

- Թագաւորական կապույտ: Այս եղանակին բեմահարթակներու վրայ կը թագաւորեն կապույտի ամենատարբեր երանգները: Այդուհանդերձ, ձեւաւորողներու ակնյայտ նախընտրութիւնը թագաւորական կապույտին կողմն է, այսպէս կոչուած՝ կապույտ պողպատի երանգը: Դաշտը չեն լքեր նաեւ կապույտի բաց երանգները:

Պէտք է նշել, որ կապույտը կատարեալ է շիկահերներու համար, քանի որ կ'ընդգծէ աչքերուն գոյնը եւ տեսողականօրէն կը տկարացնէ մագերուն դեղնութիւնը: Ոմանք, նոյնիսկ, կապույտը համարած են նոր սեւ:

Առանց Վարդագոյն Ակնոցի. Ի՞նչպէս Տեսնել Տղամարդու Ձգացմունքներուն Խորը

Յաճախ սէրը իսկապէս վարդագոյն ակնոց կը դնէ կիներու աչքին եւ անոնք կը սկսին մտածել, որ եթէ ժամադրութեան կ'երթան կամ առաւօտեան կ'արթնան անոր կողքին, ուրեմն ամէն ինչ իտէլաական է: Մինչդեռ միշտ չէ, որ այդպէս է: Կը փորձենք օգնել ձեզի երրորդ աչքով նայելու ձեր յարաբերութիւններուն ու պարզելու՝ անտարբեր է արդեօք ան, թէ՞ ոչ:

1) Զի կարօտնար: Եթէ ձեր սիրելին հակուած չէ առաւել յաճախ տեսնելու ձեզ, չի հեռաձայններ աշխատանքային ընդմիջումներուն ընթացքին, իսկ երկար բաժանումէ ետք հանդիպելով կը խօսի այնպէս, կարծես 1 ժամ առաջ տեսնուած էք, ուրեմն ան անտարբեր է:

2) Կը խուսափի աչքերուդ մէջ նայելէն: Եթէ ժամադրութեան ընթացքին ան կը նայի պատին, իր ձեռքին կամ, անգամ, պլուզիդ բացուածքին, ուրեմն կրնաս վստահ ըլլալ, որ եթէ նոյնիսկ կը հետաքրքրես անոր, ուստի միայն սեռային տեսանկիւնէն:

Եթէ պարբերաբար նկատես, որ ան ո՛չ միայն կը նայի քեզի, այլեւ կը դառնայ ուրիշ կողմ,

անհամբերութեան նշաններ ցոյց կու տայ, կ'օրօրուի աթոռին վրայ, ուրեմն ընկերակցութիւնդ անոր համար ամենահաճելին չէ:

3) Դուրս առաջնային չես: Եթէ ան ունի բազմաթիւ զբաղումներ, հետաքրքրութիւններ ու դուր անոնց մէջ առաջատարը չես, ուստի արագ հետեւութիւններ կատարէ: Եթէ ան կը նախընտրէ ո՛չ թէ տեսնել քեզ, այլ հանդիպել ընկերներուն, զբաղիլ այլ գործերով կամ, անգամ, քննալ, ուստի վստահաբար յարաբերութիւնները խզելու ժամանակն է:

4) Կ'արգիլէ մտնել իր տարածք: Այո՛, եթէ կը նկատէք, որ ան կը նախընտրէ չխօսիլ իր մասին, ձեզի իր տուն չի հրաւիրեր, չի ծանօթացներ ընկերներու եւ ընտանիքի անդամներու, ուրեմն ամէն ինչ պարզ է. ան լուրջ մտադրութիւններ չունի ձեզի հետ կապուած:

5) Զի հետաքրքրուի ձեզմով: Սիրող տղամարդիկ սովորաբար հարցեր կու տան իրենց կանանց մանկութենէն եւ այլ քաղցր

Հիմնական Սխալները Նոր Սկսող Սիրային Յարաբերութիւններու Ժամանակ

Յարաբերութիւնները, դեռ չծնած, կրնան յօդս ցնդիլ, եթէ ժամանակին չորդեզրէք այլոց փորձը ու թոյլ տաք այն յայտնի սխալները, որ հասցուցած են բազմաթիւ գոյգերու քայքայման:

Ամէն ինչ հաւանաբար բարդ կը թուի, բայց ատիկա բոլորովին ալ այդպէս չէ: Ընդամէնը պէտք է հասկնալ՝ ինչ չընել յարաբերութիւններու զարգացման գոնէ առաջին փուլին:

1) Աւելորդ ուշադրութիւն-Անհամբերութիւնը կրկին շփուելու այն մարդուն հետ, որ բոլորովին վերջերս գրաւած է սիրտդ, ի հարկէ, հասկնալի է, ցուցադրուող ուշադրութիւնը նոյնպէս՝ բնական, բայց կայ որոշ սահման, որմէ այն կողմ ուշադրութիւնը կը վերածուի յամառութեամբ մարդու կեանք մտնելու: Բոլորին համար ալ հաճելի է ուշադրութիւնը, սակայն տղամարդիկ տարբեր են: Շատերու համար օրուան ընթացքին 10 անգամ հեռաձայնելը լիովին արտօնելի չափանիշ է, ուրիշներու համար նոյնիսկ 3 անգամ հեռաձայնել՝ չափազանց: Դժուար չէ պարզել, թէ որ տեսակին կը պատկանի ձեր տղամարդը: Ամէն ինչ կախուած է անոր աշխատանքէն: Եթէ ան «գործի մարդ է», ուստի ժողովներու ընթացքին մէկը միւսին ետեւէն եկող հաղորդագրութիւնները ցանկութիւն կ'առաջացնեն ձեզմէ ազատուելու: Խնդիրը միայն լուրջ աշխատանքը չէ, այլ նաեւ՝ յազնուցած ժամանակացոյցը:

2) Աւելորդ հետաքրքրասիրութիւն- Բնական է, որ դուք պիտի ուզէք ամէն ինչ գիտնալ ձեր ընտրեալին մասին, սակայն համբերութիւն ունեցէք: Պէտք չէ անոր շարունակ հարցեր տալ ներկայէն, անցեալէն ու ապագայէն: Յիշեցէք, որ շատ բաներ կարելի է հասկնալ անգամ առանց խօսքերու՝ ուղղակի հետեւելով անոր շարժումներուն, պահուածքին, վարքին: «Կ'ուզեմ գիտնալ ամէն ինչ եւ մէկ անգամէն» սկզբունքը բնականաբար կրնայ զայրացնել զինք, որուն

իբրեւ արդիւնք կրնան փճանալ ձեր յարաբերութիւնները:

3) «Նախորդներուդ» մասին պատմութիւններ- Անցեալ փորձի մասին տեղեկատուութիւնը, ի հարկէ, այն է, ինչէն կը սկսի իւրաքանչիւր յարաբերութիւն: Բայց պէտք է հասկնալ, որ մէկ անգամ խօսիլ ձեր անցեալ սիրոյ մասին ու մանրամասնել անկէ բաժնուելուն պատճառները լիովին բաւարար են, ձիշդ չէ ամէն առիթի անոր մասին խօսիլը: Անցեալը պէտք է մնայ անցեալի մէջ:

4) Ուշադրութեան պակաս- Ասիկա, անշուշտ, աւելորդ ուշադրութեան հակառակ բեւեռն է՝ միւս ծայրայեղութիւնը, երբ դուք, վախճալով անիմաստ անհանգստացնելի գինք կամ ալ ուղղակի անոր առաջին քայլին սպասելով, չէք գրեր, չէք հեռաձայններ: Կրնայ այնպէս հասկցուիլ, որ նոյն պահուն ձեր սիրելին եւս կը սպասէ ձեր գանգին, ու իրավիճակը կը նմանի երկկողմանի անտարբերութեան: Եթէ ան ամբողջ օր մը չէ երեւցած հորիզոնի վրայ, ալ մի սպասէք. դուք կատարեցէք առաջին քայլը: Հեռաձայնեցէք անոր, բայց մի հարցնէք, թէ ինչու չէ հեռաձայնած, այլ ուղղակի ըսէք. «Ի՞նչպէս ես: Ի՞նչպէս անցաւ նախորդ օրդ»:

5) Շուտ սկսած խանդ ու սեփականատիրութիւն- Ձեր զգացմունքները կրնան երկու կամ երեք օրուան մէջ այնպէս բորբոքիլ, որ նոյնքան արագ յառաջանայ գինք ուրիշի հետ կիսել չցանկալու զգացողութիւնը: Ասիկա, ի հարկէ, բնական է: Բայց տիրապետեցէք դուք ձեզի: Երկու-երեք օրը, անգամ երկու-երեք շաբաթը ձեզի իրատուը չեն տար խիտ անով հարցնելու՝ «Ո՞ր է իր», «Որո՞նք են իր»»: Նման հարցերը բնական կը դառնան միայն այն ժամանակ, երբ ձեր յարաբերութիւնը երկուստեք գիտակցուած տեղափոխուի նոր հարթութիւն, եւ երկուքդ ալ զգաք, որ այդուհետեւ անբաժան գոյգ էք:

Ստեղծեցէք Ձեր «Իտեալական» Տղամարդը

Շատ կանայք նոյնիսկ իրենց միակին եւ անկրկնելիին հանդիպելէ ետք կը շարունակեն երազել արքայազնի մասին: Իսկ ոմանք ալ երազանքէն կ'անցնին անոր իրագործման՝ փորձելով վերադաստիարակել իրենց սիրելիները:

Կանայք շատ ուշադիր են ընտրութեան հարցով: Անոնք կը փնտռեն իտէլական տղամարդիկ, որոնց կարելի է պատկերացնել միայն երազի մէջ: Բայց եկէք հասկնալ՝ արդեօք մենք իտէլական ենք: Զէ՞ որ իտէլական տղամարդոց կողքին պէտք է ըլլան իտէլական կանայք:

Սկսէք դուք ձեզմէ: Եթէ ձեզի համար հաճելի չեն ձեր տղամարդու բնաւորութեան որոշ գիծեր, յիշեցէք, որ չ'արժեր անընդհատ «սղոցել» անոր ականջները՝ խօսելով այդ մասին:

Ացտեղ կը գործէ այն սկզբունքը, որ աւելի լաւ է վարուիք անոր հետ այնպէս, ինչպէս կը փափաքէիք, որ ան վարուիք ձեր հետ: Օրինակ՝ դուք կ'ուզէք, որ ձեր ամուսինը աւելի հոգատար ըլլայ ձեզի հանդէպ: Դուք դարձէք աւելի հոգատար: Բայց կարեւորը այն է,

որ ոչ թէ դերասանութիւն ընէք, այլ ամէն ինչ ըլլայ ի սրտէ: Նոյնը կը վերաբերի բոլոր այն նրբութիւններուն, որոնք կապուած են գոյգի ընդհանուր ցանկութիւններուն, գիշերու պատրաստակամութեան հետ:

Կենսասէր, անկեղծօրէն ինքն իր վրայ աշխատող, ուրիշներու թերութիւններուն վրայ չկեղծոնացող մարդը միշտ յարգանքի եւ հիացմունքի կ'արժանանայ շրջապատողներուն կողմէ: Ձեր սիրելին նոյնպէս չի կրնար անտարբեր մնալ՝ տեսնելով ձեր ինքնակատարելագործումը: Ան անպայման կը փափաքի միանալ ձեզի: Իսկ ի՞նչը կրնայ ամբարցնել յարաբերութիւնները, եթէ ոչ ընդհանուր աշխատանքը սեփական սխալներու եւ թերութիւններու վրայ:

Նշենք, որ շատ կանանց համար տղամարդու իտէլական յատկանիշը բարութիւնն ու հոգատարութիւնն է, ուրիշներու համար՝ խելացողութիւնը, առնականութիւնը, ազնուութիւնը, ուժը, գործունեայ ըլլալը, կատակասիրութիւնը, աշխատասիրութիւնը եւ ի վերջոյ արտաքինը:

Հայաստանում Պաքուի Խաղընկերները

Շարունակուած էջ 2-էն

ներ, ինչը սակայն գործնականում նշանակում է «պատերազմ արդիւնահանողի» կարգավիճակից հրաժարում, քանի որ միայն այդ դէպքում Ատրպէյճանը կը կարողանայ ակնկալել էներգետիկ կայուն գործընկերութիւն, առանց որի լրջագոյն խնդիրներէ առաջ կարող է յայտնուել Ատրպէյճանի տնտեսութիւնը եւ ֆինանսական համակարգը, որն արդէն իսկ ունե-

ցել է մի քանի լուրջ ցնցում: Հայաստանում խորհրդարանի ընտրութիւնից առաջ Պաքուն թերեւս կրկին փորձում է գործընկեր գտնել Հայաստանում, կամ խաղընկեր, թե՛մա յուշելով խորհրդարանի արտահերթ ընտրութիւնից առաջ Նիկոլ Փաշինեանի դէմ հնչեցնելու համար: Ո՞վ կը խաղարկի արտահերթ ընտրութիւնից առաջ Նիկոլ Փաշինեանի դէմ Ատրպէյճանի նետած գնդակը: «ԼՐԱԳԻՐ»

Լսելու Կամ... Խօսելու Համար

Շարունակուած էջ 6-էն

մը, որ զինք պիտի հանէր արիւնոտ տիղմէն ու ամենակարեւորը կարողանար ապահովել Միջին Արեւելք գործողութեան իր բանակային դասակներուն ապահովութիւնը:

Ու հոս նաեւ հասկնալի կը դառնար, որ Միացեալ Նահանգներ պարտաւոր էր նոր ձեւաչափերու դիմելով խաղի նոր կանոններ թելադրել, կամ առնուազն բանար նոր ճակատներ միշտ գէնքի վերածելով «պաշտպանութեան լաւագոյն միջոցը, յարձակում կատարելն է» ընկալումը:

Եւ այդպէս շատ նեղ ժամանակամիջոցի մը մէջ դարձեալ հրատապ կը դառնար Իրանի հարցը ու նաեւ գործի կը դրուէր տնտեսական ճնշումներու ճանապարհով ընդդիմախօսը ծունկի բերելու մօտեցումը:

Պոլիթըն ամէն տեղ էր: Մոսկուայի, բայց մանաւանդ Թեհրանի դէմ հրապարակուած պատիժներու ետին, Մէնտցիներուն յաւելեալ «Իրաւասութիւններ» եւ յատկապէս ԵՖՃԷՆի մէջ անոնց անմարդկային վերաբերմունքը «հովանաւորելու» ետին ու նաեւ լիբանանեան «Հըզպալլաին» տարբեր մակարդակի ճնշումներ իրականացնելու ետին:

Հետեւաբար Պոլիթընի «սպասուած» այս շրջապտոյտը երբեք պատահական չէ: «Թայմս»-ը, թիրախները եւ նպատակները յստակ չեն, սակայն Պոլիթընի նման գործիչի մը միանգամայն Մոսկուա, Պաքու, Թիֆլիս ու Երեւան այցելութիւն տալու ծրագիրն ալ պատահական չէ: Մէկդի դնելով Ռուսաստան, Ատրպէյճան եւ Վրաստան այցելելու նպատակները պէտք է հաշուի առ-

նել, որ ամերիկացի նման բարձրատիճան գործիչի մը Երեւան տալիք այցելութիւնը պիտի ըլլայ առաջինը երկար ժամանակէ ի վեր:

Հասկնալի է նաեւ, որ Պոլիթըն պիտի փորձէ ամէն ինչ ընել, ցոյց տալու համար, որ Երեւանի մէջ իր ձայնը լսելի է: Լսելի է մանաւանդ, երբ հաշուի առնենք, որ Հայաստանի նոր իշխանութիւնները կը համարուին իրենց նախկիններուն չնամանող եւ արեւմտեան աշխարհին հանդէպ (առնուազն Փաշինեանի աշխակակազմի նեղ շրջանակներուն մէջ) դրական որոշ վերաբերմունք ունենալու խնդիրը:

Հոս է նաեւ, որ կը ծագի հարց: Արդեօք Պոլիթըն ինչ պիտի ուզէ Փաշինեանէն: Պիտի խօսի Իրանի մասին, կամ այդ առումով որոշ վտանգաւոր առաջարկներ պիտի ընէ:

Անշուշտ այստեղ կայ նաեւ Անգարա-Ուաշինկթըն յարաբերութիւններու հարցը ու հոս է նաեւ, որ Հայաստանի իշխանութիւնները ունին կարեւոր կատարելիք ու ըսելիք խօսք: Սակայն արդեօք Պոլիթըն կու գայ Լսելու թէ խօսելու:

Ի վերջոյ անոր նման «ծեր աղուէս» համարուող եւ Միջին Արեւելքի մէջ մեծ արիւնահոսութիւններու «ճարտարապետ» հանդիսացող այս գործիչը «պարապ վախտի խաղալիք» պիտի չդառնայ ու բացայայտ է նաեւ, որ անոր այցելութեան տարբեր երանգները ի յայտ պիտի գան, իր այցելութեան օրերէն ոչ շատ հեռու:

Ամէն պարագայի տակ Պոլիթընի հետ պտոյտի ելլելու ցանկացած փորձ նման է ականաղաշտի մը մէջ քալելուն ու այդ առումով է նաեւ, որ Փաշինեան եւ իր թիմակիցները պարտաւոր են յայտնուելու եւ արթնանալ:

Եթէ Ամէն Հայ Մի Քիչ Ազնաւոր Լինէր

Շարունակուած էջ 6-էն

ժածներուն... Անոր շնորհիւ Հայաստան շատ բան տուաւ Ֆրանսային»:

Միտոյ երգիչը, որ սէր դաստիարակեց աշխարհին, սիրեց իր ազգն ու հայրենիքը այնպիսի ձեւով, որ իր երգերուն ընդմէջէն հայը սիրել տուաւ աշխարհին: Մենք ալ զինք սիրեցինք, որովհետեւ, վարչապետ Փաշինեանի խօսքով, «Ազնաւորն այն մարդն է, ով հայու անունը հասցրել է նոր բարձունքների, ով հայի հպարտութեան մի նոր շունչ է տուել ու մի նոր երանգ, ով կարողացել է ապրել իր պատմական հայրենիքի եւ իր ժողովուրդի ցաւերով, հոգսերով եւ երազանքներով»:

Մեր ժողովուրդը սիրեց ու պատուեց իր մեծ զաւակը՝ Ազնաւորը, եւ «զնա՛ մեռիք, եկ՛՛ր սիրեմ» աւանդական ասացուածքին ականջ չտուաւ: Անոր անունով հրապարակ անուանեց մայրաքա-

ղաք Երեւանի մէջ եւ թանգարան շինեց «Մայր Հայաստան» հռչակաւոր յուշարձանէն ոչ շատ հեռու եւ անոր շնորհեց «ազգային հերոս» կոչումը, իր անուն հրապարակին մէջ բարձրահասակ արձան կանգնեցուց Կիւմրիի մէջ, զինք նշանակեց Հայաստանի մշտական պատուիրակ UNESCO-ի եւ արտակարգ ու լիազօր դեսպան Զուլիգերիոյ մէջ:

Այս յօդուածս թող ըլլայ նաեւ հայ անդամատանին մէջ գտնուող ողբացեալ կնոջս եւ շատերու գովերգութիւնն Ազնաւորի մասին, որուն երգերէն ներշնչուած՝ սիրահարուեցան, սիրեցին եւ սիրուեցան:

Ամէն հայու սրտէն բխած՝ անասման սէր ու պատկառանք քեզի, ո՞վ մեծարժէք Շարլ Ազնաւոր:

Փա՛ռք ու պատիւ քու ազգանուէր ու ազգաշահ վաստակիդ, եւ ծնրադիր խոնարհում՝ խնկալի ու անմոռաց յիշատակիդ առջեւ:

Նոր Հնարաւորութիւններ

Շարունակուած էջ 17-էն

արժէքները:

Գազաթափողովի վերջին օրը՝ Հոկտեմբերի 12-ին, ՀԲԼՄ Մոնրեալի գրասենեակը եւ ֆրանսալեզու համալսարանների ու հետազօտական հաստատութիւնների համաշխարհային ցանց հանդիսացող Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալութիւնը (Agence universitaire de la Francophonie կամ AUF) ստորագրեցին շրջանակային համաձայնագիր՝ Հայաստանի ֆրանսախօս ուսանողների համար նոր կրթական հնարաւորութիւններ ստեղծելով: Ամէն տարի Քիբեկի ֆրանսալեզու համալսարաններ ընդունուած հայաստանցի չորս ուսանողներ կրթաթոշակ կը ստանան՝ իրենց ասպիրանտական աստիճաններին հետամուտ լինելու նպատակով: AUF-ը նախնական ընտրութիւնն անցած յաւակնորդներին կ'ազատի ուսման վճարներից, իսկ ՀԲԼՄ-ն կ'վերահսկի ընտրութեան գործընթացը, որոշակի ֆինանսական օժանդակութիւն կցուցաբերի այդ ուսանողներին եւ կիթանի նրանց ինտեգրումը համաշխարհային ֆրանկոֆոն հանրութիւնում: Ստորագրման արարողութիւնը տեղի ունեցաւ ՀԲԼՄ Հայաստանի գրասենեակում, որին մասնակցում էին Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Ֆարութիւնեանի, պաշտօնատար անձիք կառավարութիւնից եւ համալսարաններից:

«Այս համաձայնագիրը աւելի լաւ հնարաւորութիւններ է ստեղծում հայ ուսանողների համար ֆրանսերէն լեզուով բարձրագոյն կրթութիւն ստանալու համար՝ միեւնոյն ժամանակ իրագործելով Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպութեան ֆրանսերէնը ողջ աշխարհում տարածելու առաքելութիւնը», - ասաց Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալութեան ղեկավար Ժան-պոլ դէ Գոդեմարը:

ՀԲԼՄ Մոնրեալի նախագահ Շահէ Թանաշեանը նշեց, որ կրթութիւնը միշտ եղել է ՀԲԼՄ-ի առաքելութեան անկիւնաքարներից մէկը: «Մայրաքաղաքում համաձայնագիր է, որ մենք ստորագրեցինք Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալութեան հետ Ֆրանկոֆոնիայի գազաթափողովի շրջանակներում: Ֆրանսիայի բուհերում Հայաստանից ուսանողներ ունենալը կիթանի կրթութեան ոլորտում համագործակցութիւնը Գանատայի եւ Հայաստանի միջեւ, ինչպէս նաեւ ֆրանսերէնը առաւել տարածուած կը դարձնի հայ հասարակութիւնում», - ասաց Թանաշեանը: «ՀԲԼՄ-ն ակնկալում է նաեւ աւելի սերտօրէն աշխատել Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հետ՝ աւելի լաւ փորձառութիւն եւ հմտութիւններ զարգացնելու ներկայիս պահանջուած ոլորտներում»:

Հայ-ֆրանսական կապերը խթանելու եւ մարդկանց հետաքրքրութիւնը ֆրանսերէնի նկատմամբ մեծացնելու նպատակով՝ ՀԲԼՄ Ֆրանսիայի գրասենեակը, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանութեան հետ գործընկերութեամբ, յայտարարել էր իմ երազանքի Հայաստանը՝ 2050 թուականին խորագրով ֆրանսերէն լեզուով կարճ պատմուածքների մրցույթի մեկնարկը:

Այս մրցույթը նպատակ ունի խրախուսելու Հայաստանի ֆրանսախօս քաղաքացիներին՝ պատկերացնելու իրենց հայրենիքի աւելի լաւ ապագան՝ վերջին ժամանակներս տեղի ունեցած ժողովրդավարութեան վերածննդի լոյսի ներքոյ: «Օգտուելով այս կարեւոր պահի՝ Երեւանում տեղի ունեցող Ֆրանկոֆոնիայի գազաթափողովի ընձեռած հնարաւորութիւնից, ՀԲԼՄ ֆրանսայի գրասենեակը այս մրցույթի միջոցով իր նպատակ է բերում Հայաստանում ֆրանսերէնի տարածմանը: Այս մրցույթը նաեւ տուրք է Շառլ Ազնաւորին, ով հմտօրէն գործածում էր այս լեզուն», - ասաց ՀԲԼՄ Ֆրանսիայի եւ ՀԲԼՄ Եւրոպայի նախագահ Նատիա Գործունեանը: «Յուսով ենք, որ մրցույթի խորագիրը կոգեշնչի մեծ թուով դիմորդներին»:

Մրցույթը բաց է Հայաստանում բնակուող անձանց համար, ովքեր իրենց կարճ (մինչեւ 3 էջ կամ 4,500 համակարգչային նիշ) ֆրանսերէն պատմուածքները կարող են ուղարկել մինչեւ դեկտեմբերի 15-ը: Լաւագոյն երեք պատմուածքների հեղինակները կ'արժանանան դրամական պարգևների:

Մրցույթի մասին մանրամասների համար այցելէք ugabfrance.org/2018/10/concours-recits/ կայքէջը:

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

**1060 North Allen Ave
Pasadena, CA 91104**

**Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506**

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին**

Որո՞նք են Ֆրանկոֆոնիայի Գազաթնաժողովի Հիմնական Արդիւնքները

Շարունակուած էջ 7-էն

որոշների հետ՝ էլ աւելի ամրապնդելով երկկողմ փոխգործակցութիւնը: Չնայած տարածական հեռավորութեանը՝ արդիւնքներ, ասիական երկրների հետ նման կապերի առկայութիւնը Հայաստանի համար բաւական կարեւոր է՝ մի կողմից փոխգործակցութեան ներուժի բացառիկ մասն է իրացման, միւս կողմից՝ միջազգային տարբեր հարթակներում համագործակցութեան տեսանկիւնից: Երեւանեան գազաթնաժողովը եւս այս առումով բաւական լաւ հարթակ ծառայեց ՖՄԿ անդամ երկրների ներկայացուցիչների հետ ՀՀ վարչապետի, նախագահի եւ ԱԳ նախարարի հանդիպումների կազմակերպման, երկկողմ յարաբերութիւնների քննարկման, օրակարգի յստակեցման եւ, ինչպէս նաեւ, նոր պայմանաւորութիւնների ձեռքբերման համար:

Գազաթնաժողովը թերեւս էլ աւելի կարեւորվեց Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մակրոնի եւ Գանատայի վարչապետ Ջասթին Թրիւդոյի Հայաստան կատարած այցով: Յատկանշական է, որ Մակրոնը նախագահի պաշտօնում առաջին անգամ էր այցելում Հայաստան: Թէեւ այցը կրում էր աշխատանքային բնույթ, այն բաւական յազգեցած էր եւ առաւել ամրապնդեց վերջին շրջանում զգալիորէն ակտիւացած հայ-ֆրանսական երկխոսութիւնը:

Բաւական ջերմ մթնոլորտում անցաւ նաեւ Ջասթին Թրիւդոյի պաշտօնական այցը, որը Գանատայի վարչապետի առաջին այցն էր Հայաստան: Այցի ընթացքում կողմերն անդրադարձել են երկկողմ յարաբերութիւնների լայն օրակարգին, ինչպէս նաեւ ձեռք բերել առանձին պայմանաւորութեան ձեւեր, օրինակ՝ Հայաստանի եւ Գանատայի միջեւ օդային փոխադրումների երկկողմ հնարաւոր համաձայնագրի, զբօսաշրջիկների ընտանքիների եւ գործարարների շփումները զլուրացնելու մեխանիզմների վերաբերեալ:

Երեւանեան Հռչակագիր

ՖՄԿ 17-րդ գազաթնաժողովի ժամանակ ընդունուեց նաեւ Երեւանեան հռչակագիրը, որի նախապատրաստական աշխատանքներում բաւական մեծ ջանքեր են կործարարուել: Այս առումով կարեւոր էր, թէ ինչ ձեւակերպումներ տեղ կը գտնեն այդ փաստաթղթում Ղարաբաղեան հակամարտութեան վերաբերեալ: Նախկինում՝ 2010, 2012, 2014 եւ 2016 թուականներին տեղի ունեցած գազաթնաժողովների ժամանակ ընդունուած բանաձեւերում եղել է անդրադարձ (հիմնականում միանման) Ղարաբաղեան հակամարտութեանը, որտեղ ՖՄԿ անդամ երկրներն իրենց աջակցութիւնն են հայտնել «բանակցութիւններին՝ Մինսկի խմբի համանախագահների միասնական եւ անբաժան հենք հանդիսացող սկզբունքների հիման վրայ», ինչպէս նաեւ կոչ են արել հակամարտութեան բոլոր կողմերին զերծ մնալ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից:

Ինչ վերաբերում է Երեւանեան հռչակագրին, ապա այն նոյնպէս ֆրանկոֆոն տարածքների հակամարտութիւններին, այդ թւում՝

Ղարաբաղեան հակամարտութեան առնչուող դրոյթներ է պարունակում: Այս առումով կարելի է առանձնացնել 18-րդ եւ 19-րդ կետերը: 18-րդ կետում, մասնաւորապէս, ասուած է, որ երկրները պարտաւորուած են. «Քննադատել միջազգային հումանիտար իրաւունքի ցանկացած խախտում, ինչպէս նաեւ հումանիտար հարցերի ինստրումենտալիզացիան եւ քաղաքականացումը, կոչ անել պաշտպանել հակամարտութեան գոտիների քաղաքացիական բնակչութեանը եւ երաշխաւորել նրանց հիմնարար իրաւունքները եւ ազատութիւններն, ինչպէս նաեւ ազատել արագ եւ անխոչընդոտ հումանիտար մուտք»:

Հռչակագրի 19-րդ կետում նշուած է. «ՄԱԿ նպատակներին եւ սկզբունքներին համաձայն՝ մենք վերահաստատում ենք մեր հաւատարմութիւնը՝ ֆրանկոֆոն տարածութեանն առնչուող ճգնաժամերի եւ հակամարտութիւնների խաղաղ կարգաւորմանը՝ մասնաւորապէս միջազգայնօրէն ճանաչուած բանակցային ձեւաչափերի շրջանակներում, բոլոր իրավիճակներում խթանելու երկխոսութիւնը, եւ միջնորդութիւնը՝ այդ ճգնաժամերի եւ հակամարտութիւնների կարգաւորմանը հասնելու համար, ինչպէս նաեւ աջակցում ենք հակամարտութիւնների կանխարգելման կարգաւորման գործընթացում կանանց աճող դերակատարմանը»:

Եթէ 19-րդ կետը աջակցութիւն է եւ ԱՀԿ ՄԽ համանախագահութեան ձեւաչափի ներքոյ ընթացող Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացին, ապա, 18-րդ յօդուածում անդրադարձ կայ հակամարտութեան գոտիներում քաղաքացիական բնակչութեան դէմ ագրեսիայի, հիմնարար իրաւունքների ոտնահարման, հումանիտար խնդիրների քաղաքականացմանը. ցաւալի էրեւոյթներ, որոնք ատրպէյճանական կողմի քաղաքականութեան մասն են:

ՖՄԿ Ընդլայնում

ՖՀԿ Երեւանեան գազաթնաժողովը կարեւոր էր նաեւ հենց կառուցիչ ընդլայնման եւ զարգացման տեսանկիւնից: Գազաթնաժողովի շրջանակներում տեղի ունեցան կազմակերպութեան գլխաւոր քարտուղարի ընտրութիւնները եւ այդ պաշտօնում ընտրուեց Ռուսիայի ներկայացուցիչ Լուիզ Մուշիկիւրաբոն: Միեւնոյն ժամանակ, Միացյալ Արաբական Էմիրութիւնները, Կոստովն եւ Սերբիան ստացան Ֆրանկոֆոնիայի ասոցացուած անդամի, իսկ Գամբիան, Իռլանդիան, Լուիզիանան (ԱՄՆ) եւ Մալթան՝ դիտորդի կարգավիճակ: Ըստ էութեան, սա ՖՄԿ նկատմամբ հետաքրքրութեան, կառուցիչ զարգացման եւ ընդլայնման եւս մէկ կարեւոր ցուցիչ է:

Ամփոփելով Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպութեան Երեւանեան գազաթնաժողովի արդիւնքները՝ կարելի է նշել, որ այն յաջողուած եւ բաւական լաւ փորձ էր Հայաստանի համար՝ ինչպէս նման մեծամասշտաբ միջոցառումների կազմակերպման, այնպէս էլ՝ այն միջազգային կապերի զարգացման եւ ամրապնդման համար ծառայեցնելու տեսանկիւնից: «Արմենպրես»

Առանց Վարդագոյն Ակնոցի.

Շարունակուած էջ 16-էն

յուշերէ, որպէսզի ան սկսի պատմել, իսկ իրենք սիրով վայելեն այդ պատմութիւնը: Եթէ ձեր ընտրեալը նման հարցեր չի տար, աւելին, չի լսեր, երբ դուք որեւէ բան կը պատմէք, լաւ նշան է:

6) Ան չի հեռաձայներ ու չի գրեր: Ան երբեք չի հեռաձայներ առաջինը, կամ չի հեռաձայներ պարզապէս գիտնալու, թէ ինչպէս ես: Երբ հիւանդ ես, ան չի գար եւ չի խնամեր քեզի, այլ կը բաւարարուի հեռաձայնելով: Այսպիսի տղամարդը կրնայ նաեւ ժամադրութիւնը չեղեալ համարել նշանակուած ժամէն մէկ ժամ առաջ:

7) Երբեք չ'ըսեր «մենք»: Ան չի փափաքիր խոստովանիլ, որ դուք ընդհանուր որեւէ բան ունիք, թէկուզ, ծրագիրներ այդ երեկոյի համար: Չի փափաքիր խօսիլ ապագայի մասին եւ կը փակէ ձեր սկսած խօսակցութիւնը:

8) Ան ձեզմէ ոչ մէկ նկար ունի: Միտող տղամարդը ամբողջ օր մը կը տրամադրէ, որ գտնէ ձեր փոքր ժամանակուան կամ դպրոցական նկարները՝ ուղղակի հետաքրքրութեան մղուած: Եթէ նման հետաքրքրութիւն չկայ, աւելին, ան չի փափաքիր ձեր հետ նկարուիլ իսկ, եթէ անգամ կը նկարուի, կը պահանջէ չղնել այդ նկարները համացանց, ուստի մտածելու բան անգամ չկայ. ան անտարբեր է:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ԾԱԽՈՒ Է

Ծախու է Լիբանանահայ մտաւորական «Նայիրի» ամսագրի ակաճաւոր խմբագիր՝ Անդրանիկ Ծառուկեանի «Նայիրի» ամսաթերթերու 1958-1975 տարիներու լաթակազմ հաւաքածոները:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել՝ Վահէ Աջապահեանին՝ (626) 354-5924:

AMAA Centennial Banquet

Los Angeles – October 20, 6 pm , AMAA Centennial Banquet at Biltmore Hotel will honor Benefactors Stephen Philibosian and Conte Foundations, Sheen Family Trust, Gerald and Patricia Turpanjian, TF Educational Foundation. Kenneth Khachigian, Master of Ceremonies . For more information call Levon Filian 626.487.5878 or the AMAA Office 201.265.2607 or e-mail mpoulos@amaa.org

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ

ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԳԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԳԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՐԶԱԿԱՆ

Հայաստանի Հաւաքականի Վերածնունդը Մակեդոնայի Դէմ



Ֆուտբոլի ՌԵՖԱ-ի Ազգերի լիգայի չորրորդ տուրում Հայաստանի ազգային հաւաքականը 4:0 հաշուով տնային յաղթանակ տարաւ խմբի առաջատար մակեդոնացիներին նկատմամբ եւ պահպանում է յաջորդ փուլ դուրս գալու շանսերը: Երեւանի «Հանրապետական» ստադիոնում կայացած հանդիպման առաջին րոպէից մինչեւ վերջին վայրկեանը գեմոտիւացուած գործող Հայաստանի հաւաքականը հրաշալի խաղ ցուցադրեց բոլոր խաղային օղակներում եւ տարաւ արժանի յաղթանակ:

Այս յաղթանակից օրեր առաջ Հայաստանի հաւաքականը մրցեց Ջիբրալթարի ընտրանու հետ՝ պարտուելով 1:0 նուագագոյն հաշուով:

Առաջին խաղակէստում մեր ընտրանու առաւելութիւնն այդքան էլ մեծ չէր: Երկրորդ կէսի սկզբում մրցակիցը կարողացաւ դառնալ կոլի հեղինակ:

50-րդ րոպէին հաշիւը 11 մեթրանոցից բացեց Չիպոլինան:

Բաց թողած կոլից յետոյ Արմէն Գիւլբուրգադեանցի թիմը մեծացրեց ճնշումը եւ ունէր մի քանի իրական կոլային պահեր, սակայն ամէն անգամ հարուածները կամ շեղ էին ընթանում կամ հիանալի էր խաղում Ջիբրալթարի դարպասապահը:

Չնայած անուշիկ ճնշմանը մեր ընտրանին չկարողացաւ կոլի հեղինակ դառնալ եւ պարտուեց 0:1 հաշուով:

Ազգերի Լիգա.

Ռուսաստանի Հաւաքականը Յաղթեց Թուրքերին

ՌԵՖԱ-ի Ազգերի լիգայում Հոկտեմբերի 14-ին մեկնարկեց չորրորդ տուրը:

Ռուսաստանի հաւաքականը Բ դիւիզիոնում ընդունեց թուրքերին եւ յաղթեց 2:0 հաշուով: Սոչիի «Ֆիշտ» ստադիոնում կայացած խաղում մէկական անգամ աչքի ընկան Ստամբուլի «Ֆեներբահչէի» պաշտպան Ռոման Նոյշտեդտերն ու փոխարինման դուրս եկած Դենիս Չերիշեւը:



Ռուսաստանի հաւաքականը 3 խաղից յետոյ ունի 7 միաւոր, իսկ թուրքերը՝ 3: 2 հանդիպում անցկացրած Շուկերիայի թիմը հաւաքել է 1 միաւոր:

Թիերի Անրին Պաշտօնապէս Նշանակուել է «Մոնաքոյի» Գլխաւոր Մարզչի Պաշտօնում

Ֆրանսայի հաւաքականի նախկին յարձակուող թիերի Անրին դարձել է «Մոնաքոյի» նոր գլխաւոր մարզիչը, յայտնում է ֆրանսական ակումբի պաշտօնական կայքը:

41-ամեայ մասնագէտի պայմանագիրն ակումբի հետ նախատեսուած է մինչեւ 2021 թուականի Յունիսը:

«Նախեւառաջ, կը ցանկանայի շնորհակալութիւն յայտնել «Մոնաքոյին» ինձ համար այս առանձնաշատուկ ակումբում մարզիչ դառնալու հնարաւորութեան համար:

Շատ ուրախ եմ, որ վերադառնում եմ «Մոնաքո»: Անհամբերութեամբ եմ սպասում նոր մարտահրաւէրին, ֆուտպոլիստների հետ ծանօթութեանն ու համատեղ աշխատանքի մեկնարկին», - մեկնաբանել է իր նշանակումն Անրին:

Հայ Սամբիստները 3 Մետալ Են Նուաճել Աշխարհի Պատանեկան Առաջնութիւնում

Թբիլիսիում անցկացուած սամբոյի աշխարհի առաջնութիւնում (2 տարիքային խմբով) Հայաստանի պատանեկան հաւաքական նուաճել է 3 մետալ:

Հայկական թիմից լաւագոյն արդիւնքը գրանցել է 48 կգ քաշային Դաւիթ Յովսէփեանը, որն արժանացել է արծաթէ մետալի: Ծաղիկ Յակոբեանը (40 կգ) եւ Դաւիթ Իսրայէլեանը (52 կգ) նուաճել են պրոնզէ մետալ, յայտնում է ՀԱՕԿ-ի մամուլի ծառայութիւնը:

Գանատան Ներկայացնող Էրիկ Բագինեանը Նուաճել է WBA Վարկածով Ախոյեանական Գօտին



Գանատան ներկայացնող հայ բռնցքամարտիկ էրիկ Բագինեանը նոկաուտով յաղթանակ է տարել գանատացի Ֆրենսի Նտետուի նկատմամբ:

Մոնրէյալում կայացած ախոյեանական մենամարտում Բագինեանը մրցակցին նոկաուտի է ենթարկել 6-րդ ռաունդում: Այս յաղթանակի արդիւնքում Բագինեանը նուաճել է WBA վարկածով Հիւսիսային Ամերիկայի ախոյեանական գօտին:

Աւելի վաղ հայ բռնցքամարտիկը, ով կարիերայում դեռեւս պարտութիւն չի կրել, ախոյեան էր դարձել նաեւ WBO վարկածով:

Յաւելնք, որ էրիկ Բագինեանը ծնուել է 1995 թուականին, Երեւանում: Բռնցքամարտիկը Գանատա է տեղափոխուել 2011 թուականին: Բագինեանի ակտիւում 21 յաղթանակ կայ, որոնցից 16-ը՝ նոկաուտով:

ՊՍԺ-ն Պատրաստ է Պայմանագիր Առաջարկել Մանչեսթեր Եունայթեդի Դարպասապահ Դավիդ Դէ Խեային



«Մանչեսթեր Եունայթեդի» դարպասապահ Դաւիդ դէ Խեան կարող է կարիերան աւարտել ֆրանսական Լիգա 1-ում:

Մպանացի դարպասապահի պայմանագիրը «կարմիր սատանաների» հետ աւարտուում է ընթացիկ մրցաշրջանի վերջում, ընդ որում ակումբն այն մէկ մրցաշրջանով երկարաձգելու հնարաւորութիւն ունի:

Անձամբ դէ Խեան չի շտապում պայմանագիրը երկարաձգելու հարցում, քանի որ ցանկանում է նախ տեսնել, թէ ինչպէս կ'աւարտուի գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրինյոյի հնարաւոր պաշտօնանկութեան պատմութիւնը:

«Daily Mail»-ի տեղեկութիւններով, իրավիճակին հետեւում է «Պարի Սեն-ժերմենը»: Փարիզեան ակումբը պատրաստ է գնել դէ Խեային «Մանչեսթեր Եունայթեդից», եթէ կողմերն այդպէս էլ համաձայնութեան չզան նոր պայմանագրի շուրջ:

Աւելի վաղ հաղորդուում էր, որ դարպասապահի շրջապատում վստահ են, որ դարպասապահի բանակցութիւնները յաջող աւարտ կ'ունենան: